Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող ***Արցախի Էլեկտրոնային Գրադարանի*** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:

Уважаемый читатель!

На сайте ***Электронной библиотеки Арцаха***, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха** (ОМУСА), размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - ***Artsakh E-Library*** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: http://artsakhlib.am/
E-mail: info@artsakhlib.am
Facebook: https://www.facebook.com/www.artsakhlib.am/
ВКонтакте: https://vk.com/artsakhelibrary
Twitter: https://twitter.com/ArtsakhELibrary

ՖԼՈՐԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԾՈՒՔԻ ՆԵՐՔՈ ՎԱՆՔ

(Պատմական ուրվագծեր. երեկ և այսօր)

ՖԼՈՐԱ ԲԱՂՐԱՄՅԱՆ

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԾՈՒՔԻ ՆԵՐՔՈ
Վ Ա Ն Ք

(Պատմական ուրվագծեր. երեկ և այսօր)

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ
2018

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)
Բ 248

Գիրքը նվիրվում է Արցախյան շարժման 30-ամյակին

Բաղրամյան Ֆլորա
Բ 248 Գանձասարի շուքի ներքո. Վանք/ Ֆ. Բաղրամյան.- Ստեփանակերտ: «Դիզակ պլյուս» հրատարակչություն, 2018.- 96 էջ:

Ֆլորա Բաղրամյանն իր «Գանձասարի շուքի ներքո. Վանք» գրքում փորձել է ներկայացնել Արցախ աշխարհի ամենահին, Գանձասարի եկեղեցու շնորհիվ մեր ժողովրդի պատմության մեջ կարևորագույն դերակատարություն ստանձնած գյուղերից մեկի՝ Վանքի անցյալն ու ներկան:

ՀՏԴ 94(479.25)
ԳՄԴ 63.3(5Հ)

ISBN 978-9939-1-0773-8

© Բաղրամյան Ֆլորա, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է հենց որ մարդու որդին իր գիտակցության ամբողջ զորությամբ կրկնում է. ես էլ Աստծու որդին եմ»:

Գարեգին Նժդեհ

Վանք գյուղի անցյալի ու ներկայի մասին գրելու մտահղացումը իմ մեջ ծագել է դեռևս արցախյան շարժման ժամանակ, երբ ադրբեջանցի պատմաբան Ախունդովը համարձակվեց և գիրք գրեց սուրբ և հզոր Գանձասարի մասին ու անամոթաբար նշեց, որ Գանձասարը ալբանական եկեղեցի է, իսկ նրա շրջապատում ապրող մարդիկ ալբաններ են: Արցախի և Հայաստանի պատմաբանների պահանջով հանձնախումբ այցելեց Մոսկվայից Գանձասար: Նրանք տեսնելով եկեղեցու պատերին հին հայկական գրաբարյան գրերը՝ քարացան: Ամեն ինչ ասված էր, ի չիք դարձրին ախունդովյան հերթական կեղծիքները... Այնուհետև արցախյան պատերազմը թեժացավ, Աստված մեզ ուղղորդեց պաշտպանել մեր հողն ու հայրենին, որովհետև մեր պայքարն արդարացի էր:

Եթե այսօր մենք գրի չառնենք մեր անցյալը, վաղը մեր ապագան հաստատուն չի լինելու, իսկ դրանում համոզված ենք մենք՝ հայերս: Եվ ես առաջարկում եմ. դա իմ կարծիքն է, եթե գրվեն Արցախի բո-

լոր գյուղերի պատմությունները, վաղը մենք կունենանք Արցախի ընդհանուր պատմություն, որը Արցախ աշխարհին խիստ անհրաժեշտ կլինի և նույնիսկ խիստ պարտադրված: Մենք ունենալով գիր ու գրականություն, մշակույթ, ինքնություն՝ այսօր մեր հարևան թշնամիները, ովքեր 17-18-րդ դարերից են ճանաչվել, այն էլ որպես քոչվոր ազգ, ցանկանում են ամեն ինչ խեղաթյուրել, կեղծել, մորթել, կացնահարել քնած մարդկանց, ուրեմն՝ իմ ապագա սերունդ, ամուր պահեք մեր այբը, մեր մշակույթը, ավելի զարգացրեք մեր ինտելեկտը, սիրեք մեր հայրենիքը, միշտ պատրաստ ու ամուր բռնեք մեր շողշողացող սրից, ու դարեդար շարադրեք մեր պատմությունը իրական, որովհետև առանց անցյալի ապագա լինել չի կարող:

«Յուրաքանչյուր մարդ պետք է այնպես ապրի, որ իր ապրած տարիների համար չփոշմանի, այլ հպարտանա, բայց ինքը լինի և մնա շատ հասարակ, շատ պարզ ու մեծ հայրենասեր...»:

ԳԱՆՁԱՍԱՐ

Գլուխ I

«Գանձասար». Խաչենի հովտի մարգարիտ ու ադամանդ: Դու եղար զորավիգ ազատակամ բանակիդ ու նաև ազատաբաղձ հույսի կենտրոն՝ տառապող ժողովրդիդ: Թաթար-մոնղոլներն անգամ չկարողացան ծնկի բերել քեզ, և քո զավակների միջոցով դու բորբոք պահեցիր հույսը ազատության, հավատը՝ ապագայի: Քանի դար է, որ ապրում ես: Ուղիղ հազար տարի: Քո մասին՝ Գանձասար, գրավոր առաջին տեղեկությունը հայտնում է Անանիա Մոկացի կա-

թողիկոսը (10-րդ դար): Ըստ Մխիթար Գոշի՝ Գանձասարն առաջնորդարան էր և Խաչենի իշխանների տոհմական տապանատունը:

Մեծ է Գանձասար թե՛ գյուղի և թե՛ վանքի պատմական ծառայությունը, ինչպես՝ արցախական աշխարհի, այնպես էլ հայ ժողովրդի կյանքում ընդհանրապես: 18-րդ դարի սկզբներին Գանձասարը դարձավ ազատագրական շարժումների կենտրոն: Ըմբռնելով Ռուսաստանի և ռուս մեծ ժողովրդի պատմական առաքելությունը Անդրկովկասի ժողովուրդների կյանքում՝ «Գանձասարում մի անգամ չէ, որ ձևակերպվել են ուղերձներ, նամակներ»՝ ուղղված ռուսական պետության ղեկավարությանը: Դիմումների ու երդումնաթղթերի տակ գրված է եղել. «Ի դրան մեծի և սուրբ աթոռայս Գանձասարոյ»: Այն

փաստը, որ Գանձասարի շուրջն են տեղադրված պատմական հնություն և նշանակություն ունեցող շատ ամրոցներ, բերդապարիսպներ, վանքեր ու ճարտարապետական կառույցներ, նույնպես խոսում են տեղանքի բնակչության վաղեմության և նրա խաղացած դերի մասին: Սեդրակ Բարխուդարյանը նշում է, որ Հասան-Ջալալյանն իր նստոց ապարանքը կառուցել էր Վանքից ներքև՝ գետի ափին և կոչվում էր Դարպասներ: Նրանց մոտ է դարերի ճամփա կտրած Խոխանաբերդը (Իշխանաբերդը): Դարպասները, որ նշանակում են ապարանքներ, եղել են Հասան-Ջալալ իշխանի նստավայրը, Խոխանաբերդի հոգևոր կենտրոնն ու տոհմական գերեզմանոցը՝ Գանձասարի վանքի մոտ: Գանձասարի տարածքում է գտնվում Հավապտուկ վանքը: «Ավերակ վանքս, որ Ջաջուռ իշխանի ցեղի հատուկ դամբարանն է, գտնվում է Դարպասների արևելյան կողմում մի ձվաձև բարձրացած սարի գագաթի վրա: Նրա արևելյան ստորոտում Գառնաքար գյուղն է, հարավում՝ Խոխանաբերդը, արևմտյան մասում՝ Դարպասները»: Գանձասարի շրջակայքում են գտնվում Թարխանա ղալան, Հիկեղան քարահանքը, Ձիանայի քարը,Դերին յալը, Կպանա հողը, Նովերը, Կարմիր քարը, որոնք ժամանակի առումով կարևոր դեր են խաղացել իշխանանիստ ամրոցի պատմության մեջ: Սակայն հայտնի է, որ մինչև վանքի օծումը (1240թ.) Հասան-Դոլա իշխանի և նրա մայր Խորիշահի կողմից Վանքի գլխավոր տաճարի կառուցումը երկարաձգվել է 22 տարի (1216-1238թթ.): Ինչպես ցույց է տալիս Ս.Բարխուդարյանն իր «Դիվան հայ վիմագրության» գրքում (Երևան,1982թ.), այսօր էլ վանքի բակում պահպանվում են խաչքարեր, որոնք կառուցվել են 1174, 1181, 1202 թվականներին: Ուրեմն՝ Գանձասարի վանքի հիմնադրումը տեղի է ունեցել ավելի վաղ ժամանակներում: Ըստ երևույթին Վանք գյուղը, իր հիմնադրման սկզբնական շրջանում նույնպես կրել է Գանձասար անունը:

Եվ այստեղ, որ վանքն է Գանձասարի, 1723թ. մարտին արցախական աշխարհի տառապած ժողովրդի անունից, Ներսես կաթողիկոսի գրչով, սակայն բոլորի սրտերով ու հույսերով հնչում են Պետրոս Ի-ին հղված ուղերձի անմահ տողերը:

«Չունկս ունկեալ և երեսս գետինն թացեալ, ձեռս առ քեզ տարածեալ արտասուալիր աչօք և մեծավ պաղատանօք ազտ արարից մեծաթևան քամ գերի եղեալ ժողովրթեամբիս, որի կամք ի ձեռս

անօրեն չար ասկիս, որք յամենայն ժամ գեղեքեն ու չարեչար տանջեն, ոմանք գերի առնելով և ոմանք կոտորելով և մնացեալն քաղցեալ և ծարավեալ լերանց բնակելով ի յարս և ի ծերպս քարանձավաց լինելով, վերև աստուած, ներքև տու, քեզանէ ի զատ ոչ-ոք չունիմք զմեզ ազատելոյ այս տառապանաց»: (Գ.Ա. Գալոյան «Ռուսաստանի և Անդրկովկասի ժողովուրդները», «Հայաստան» 1978թ. Էջ 87):

1703թ. հայ մելիքները ստացան Իսրայել Օրիի և Մինաս վարդապետի իրենց խնդրանքների նկատմամբ ռուսական ցարի ցուցաբերած բարյացակամ վերաբերմունքի մասին: Համընդհանուր ոգևորությունը, մոտալուտ ազատագրական շարժումները պարսկական լծից ազատագրվելու պայծառ հույսը բոցավառվեց նաև Գանձասարում, Խաչենի հովտում, ամբողջ արցախական հովտում:

«Մենք այժմ մեր գրքերին էլ իրոք կհավատանք, որոնցում գրված է, թե մեզ համար իսկական փրկություն կգա հյուսիսից, այլ ոչ թե մի ուրիշ երկրից... Ավելի քան 200 տարի է, ինչ թուրքերը նվաճել են մեզ, բայց ոչ մի թագավորի, բացի ձեզանից, մենք չենք դիմել»:

1808թ. վախճանվեց Ղարաբաղի Իսրայել կաթողիկոսը: Դա այն չարագործն էր, որ մատնեց հայոց մելիքներին, որ Հովհաննես կաթողիկոսին սպանել տվեց և իր դավաճանությամբ Իբրահիմ-խանի սիրելին դարձավ: Մեզ հայտնի է, որ նույն չարագործից հալածվելով Հովհաննես կաթողիկոսի եղբայր Հասան-Ջալալյան Սարգիս կաթողիկոսը Ղարաբաղի գաղթականների հետ ապրում էր Վրաստանի Հաղպատ վանքում: Երբ Սարգիս կաթողիկոսը լսեց իր ոխերիմ հակառակորդի՝ Իսրայել կաթողիկոսի մահը, երբ իմացավ, որ Իբրահիմ-խանը սպանված է արդեն, նա որոշեց վերադառնալ Գանձասարի վանքը և կրկին տիրանալ Աղվանից կաթողիկոսական աթոռին, որից բավական ժամանակ անջատված էր: 1808թ. նա գնաց Գանձասար: Վանքը նա տեսավ ամայի դրության մեջ: Կարճ ժամանակում նա կարողացավ կարգի բերել վանքը և ետ խլել վանքի պատկան հողերը, որոնց տիրացել էին թուրք բեկերը և հայ ազնվականները: Սարգիս կաթողիկոսը Գանձասար տեղափոխվելով՝ շուտով նրա և Էջմիածնի միջև նոր վիճաբանություններ ծագեցին: Այդ վիճաբանություններին առիթ տվեց կաթողիկոսի փառասիրական վարմունքը: 1815թ. Էջմիածնի բարձր հոգևոր կառավարությունը ռուսաց իշխանության ուժով հարկադրեց Սարգսին հրաժար-

վել կաթողիկոսության տիտղոսից և տվեց նրան միտրոպոլիտության տիտղոս արքեպիսկոպոսի աստիճանով: Սարգսի մահից հետո միտրոպոլիտ ընտրվեց Գանձասարում Բաղդասարը, ով Սարգսի եղբոր որդին էր: Եթե չլիներ Բաղդասար միտրոպոլիտը, այսօր Գանձասարի վանքը և Ղարաբաղի մյուս վանքերը չէին ունենա այնքան շատ վանքապատկան հողեր: Ինքը Բաղդասար միտրոպոլիտը թեև անուս, և որպես ղարաբաղցի՝ կոշտ-կոպիտ մարդ էր, բայց որպես ղարաբաղցի ուներ բնական խելք, տոկունություն և հեռատեսություն: Նա ուսում չուներ, բայց սաստիկ ուսումնասեր էր: Սկզբում նա հիմնեց Գանձասարի վանքում մի դպրոց և Նուխիի կողմերից հրավիրեց ճարտասան և լավ հայկաբան Հովսեփ վարդապետին, որպես վարժապետ և նույն դպրոցի կառավարիչ: Գուցե այդ գործունյա և եռանդուն մարդն ավելի մեծ օգուտներ կհասցներ Ղարաբաղին, եթե մի քանի տարի ևս ապրելու լիներ: Մաշող հոդացավը սկսեց սաստկանալ և 1854թ. հունիսի 27-ին նրան գերեզման տարավ 79 տարեկանում: Նրա մարմինը թաղվեց Գանձասարի վանքի գավթի մեջ, իր երկու հորեղբայրների՝ Հովհաննես կաթողիկոսի և Սարգիս միտրոպոլիտի շիրիմների մոտ: Նրա մահից հետո Աղվանից միտրոպոլիտությունը բոլորովին վերջացավ: Բաղդասար միտրոպոլիտից հետո Հասան-Ջալալյանների տոհմից միայն Սարգիս արքեպիսկոպոսը բավական ժամանակ վարեց Ղարաբաղի թեմական առաջնորդի պաշտոնը: Նրա մահից հետո Հասան-Ջալալյաններից այլևս նշանավոր եկեղեցականներ չհայտնվեցին: Խաչենի Հասան-Ջալալյան վերջին մելիքներից նշանավոր եղավ Բաղդասար միտրոպոլիտի եղբայր մելիք Ալահվերդի II-ը, ով վախճանվեց 1827 թվականին և նրանից հետո այդ տոհմի մելիքությունը վերջացավ: Նա թողեց չորս որդի՝ Երեմիա քահանա, Մովսես վարդապետ, Աբրահամ-բեկ և Հովսեփ-բեկ (Ռաֆֆու 10-րդ հատոր): Ղարաբաղի տիրապետող հինգ մելիքական տներից միայն Խաչենի իշխողներն են եղել բնիկներ, իսկ մնացած չորսի՝ Գյուլիստանի, Ջրաբերդի, Վարանդայի, Դիզակի իշխողները բնիկներ չեն եղել, օտար երկրներից գաղթականներ են եղել: Խաչենի Հասան Ջալալյան մելիքների ծագումը շատ հին պետք է համարել, նրանք առաջ են եկել Հասան Ջալալյան իշխաններից: Դարերի ընթացքում այնքան բազմացել և ճյուղավորվել էին նրանք, որ Խաչենի փոքրիկ գավառը ամենամանր կտոր-

ներով բաժանված էր այդ տոհմի ներկայացուցիչների ձեռքում, որոնք բնականաբար շատ հաշտ չէին կարող լինել իրար հետ: Այդ էր պատճառը նրանց վերջին ժամանակների թուլության, որ չէին կազմում մի զորեղ միացյալ իշխանություն: Բացի դրանից միևնույն տոհմից ընտրվում էին Գանձասարի վանքի կաթողիկոսները, որոնց ճնշման ներքո այս երկրի մելիքները շատ չէին զորանում: 16-րդ դարում Հասան Ջալալյան իշխաններից նշանավոր էին երեք եղբայրներ Երեմիա կաթողիկոսը, Վելինշանբեկ III-ը և Մուլքի բեկը: Երեմիա կաթողիկոսը վախճանվեց 1700 թվականին, Վելինշաբեկը վախճանվեց 1686 թվականին և նրա որդի Եսային Երեմիայի փոխարեն կաթողիկոս դարձավ: Իսկ Մուլքի բեկը վախճանվեց 1716 թվականին և թողեց երկու որդի: Երեցը կոչվում էր Մելիք-Գրիգոր, կրտսերը կոչվում էր Մելիք-Ալահվերդի: Մելիք Գրիգորը խելացի մարդ էր: Զանազան քաջագործություններից հետո նա մտավ Գանձասարի վանքը և ձեռնադրվեց վարդապետ: Նրա եղբայր Մելիք-Ալահվերդին վարեց Խաչենի իշխանությունը, իսկ այդ վերջինի մահից հետո իր որդի Մելիք-բեկը ութ որդիներ թողեց, նրա որդիներից մեկն էր Գանձասարի Հովհաննես կաթողիկոսը, որը սպանվեց Շուշի բերդի Իբրահիմ խանից (Ռաֆֆի, 10-րդ հատոր): Եսայի կաթողիկոսն էր, որ ինչպես հետո պիտի տեսնենք Պետրոս Մեծի ժամանակ սկսեց ռուսաց կառավարության հետ բանակցություններ անել Ղարաբաղում հայոց անկախ իշխանություն հիմնելու համար՝ ռուսաց հովանավորության ներքո: Եսային հոգով և սրտով նվիրվեց ազատական շարժմանը և նրա ժամանակից Գանձասարը, ուր Իսրայել Օրին այնքան սառն ընդունելություն էր գտել երեք տարի առաջ՝ դարձավ այն միակ տեղը, ուր կենտրոնանում էին բոլոր քաղաքական բանակցությունները, ապստամբական ծրագրերը: Գանձասարը հայկական գործի հոգին էր: 1703 թվականի մայիսին այդտեղ հավաքվել էին երկրի հայ կառավարիչները, դա առաջին գաղտնի ժողովն էր Գանձասարի: Ներկա էին ութ մելիքներ, որոնցից յոթը Անգեղակոթի ժողովի մասնակիցներից էին: Օրին և Մինաս վարդապետը մի քանի հարցեր էին գրել իրենց նամակներում և գաղտնի ժողովը զբաղվեց այդ հարցերի քննությամբ: Նախ և առաջ պետք է գրել մի շնորհակալական նամակ Պետրոս թագավորին: Կազմվեց մի երկար գրություն, որ ստորագրվեց մայիսի 27-ին և, որի մեջ մելիքներն իրենց խոնարհ

շնորհակալությունն էին անում և սրտաշարժ խոսքերով աղաչում էին Պետրոսին չմոռանալ գերի Հայաստանը *(Լեո, 5-րդ հատոր)*:

Միջնադարյան հայ ճարտարապետական գլուխգործոցներից մեկը համարվում է Գանձասարը: Գանձասար է կոչվում՝ նրա շրջակայքում արծաթահանքի առկայության պատճառով: Հայ անվանի ճարտարապետ Թորոս Թորոմանյանի վկայությամբ՝ Փարիզի Սորբոն համալսարանի բյուզանդական ճարտարապետության պրոֆեսոր Ծ. Դիլը 1907 թվականին բնութագրելով հայ ճարտարվեստի գործերից համաշխարհային մշակույթի գանձարանը մտած հին կառույցները՝ 3-րդ տեղը հատկացրեց Գանձասարին՝ Ախթամար և Հռիփսիմե տաճարներից հետո, 4-րդ տեղը՝ Հաղպատի վանքը, 5-րդ տեղը՝ Անիի մայր եկեղեցին: Իսկ ռուս գիտնական Ա. Հակոբսոնն այդ կոթողը համարել է հայ ճարտարապետության հանրագիտարան և մարգարիտ:

1238-1239 թվականներին մոնղոլ-թաթարները հարձակվում են Խաչենի մելիքության վրա: Խոխանաբերդի վրա են հարձակվում մոնղոլները, բայց չեն կարողանում հաղթել և հաշտություն են պահանջում: Հասան-Ջալալը իջնում է նվերներով և հաշտություն կնքում, հետո իր համաձայնությամբ աղջկան տալիս է մոնղոլ իշխանին կնության՝ հայ-մոնղոլական բարեկամությունը ամրապնդելու համար, որի հետևանքով ընդլայնվում է Արցախի տարածքը: Իսկ արցախցի մեծ ռոմանտիկ գրող Մուրացանը հետագայում գրեց «Ռուզան» պատմավեպը՝ այս փաստերի հիման վրա: Վանքի տարածքում գտնվող Կաչաղակաբերդ անունը առաջացել է 1220 թվականին, երբ թաթարները ներխուժում են Վանք գյուղի տարածքը: Ժողովուրդը հերոսաբար դիմադրություն է ցույց տալիս, չեն հնազանդվում, մահանում են անթիվ մարդիկ: Բերդի գլխավերևով թռչում և շրջում են կաչաղակներ դիակների վրայով, դա է պատճառը, որ այդ տարածքը կոչվեց Կաչաղակաբերդ *(Կիրակոս Գանձակեցի)*:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ

Գանձասարի եկեղեցին ԽՍՀՄ-ի ժամանակ չէր գործում, նույնիսկ զանգերն էին վաճառվել: Գանձասարի վանքը վտանգված էր: 1950-ական թվականներին Արցախի հայկական հոգևոր օջախները վերացնելու նպատակով Բաքվի կարգադրությամբ Վանք գյուղի մի քանի կոմունիստների (ակտիվիստների) ջանքերով, Գանձասարի պայթեցումը հանձնարարվում է Հովհաննես Ասրյանին: Ընտրությունը պատահական չէր, քանի որ նա Տերտերանց թոռ էր և Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ վերցրված գերի: Նա մեկնում է Մարտակերտ, հանդիպում շրջկոմի երկրորդ քարտուղարին և հայտնում, որ եթե իրենց ստիպեն եկեղեցին պայթեցնել ապա ինքնասպան կլինի, բայց եկեղեցուն չի վնասի: Պարզվեց, որ քարտուղարը նույնպես դեմ էր նման վանդալիզմին: Փոխադարձ վստահության շնորհիվ պայմանավորվածություն ձեռք բերվեց, որ Հովհաննեսն առերես չպիտի հրաժարվի պայթեցնելու հրահանգը կատարելուց, իսկ իրականում տարբեր պատճառներ հարուցելով ձգձգի դրա կատարումը, մինչև մարզային ղեկավարության միջոցով կկասեցներ որոշումը, իսկ քարտուղարը իր հերթին թույլ չէր տա դրա համար Հովհաննեսի նկատմամբ խիստ պատիժ կիրառել: Նա ասաց Հովհաննեսին. «Ուշադիր և զգոն եղիր, այդ գործը ուրիշին չհանձնարարեն, ես էլ այստեղ ամեն ինչ կանեմ դրա համար, թե չէ Գանձասարի եկեղեցին կկորցնենք» (Հիմք՝ Էդուարդ Դանիելյանի «Մի զարհուրելի դեպք Գանձասարի մասին», Երևան, 2005թ.): Երբ կասեցվեց Գանձասարի եկեղեցու պայթեցման որոշումը, Հովհաննեսը առաջարկեց և նույն քարտուղարի միջոցով ստանձնեց եկեղեցու պահպանությունն ու խնամքը՝ որպես հասարակական աշխատանք:

«Խորհրդային տարիներին գնացել էի Գանձասարը տեսնելու, Հասան-Ջալալ կաթողիկոսի շիրիմը: Բայց ի՞նչ տեսա՝ ծեր պահակն ինձ պատմեց, որ մի գիշեր վանքեցի մի տրակտորիստ, իհարկե, նրան հրամայված էր, հիմնահատակ փորել էր կաթողիկոսի գերեզմանը, քար ու քանդ արել: Ծեր պահակն ինձ հուշեց տրակտորիստի անուն-ազգանունը, և մինչև ես պատրաստվում էի դատի տալ նրան՝ Վանքից լուր ուղարկեցին, որ մեռել է տրակտորիստը» (*ՀՐԱՉՅԱ ԲԵԳԼԱՐՅԱՆ, «Արցախ-նամե», գիրք 5, Ստեփանակերտ 2007թ.):*

Եկեղեցին գործող դառնալուց անմիջապես հետո, Գանձասարի վաղեմի փառքն ու պատիվը, մեծ ջանք ու եռանդ նվիրեց վերականգնելու համար, Արցախի թեմի առաջնորդ՝ Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը: Նա իսկապես սուրբ է և հայրենասեր: Նա երկար ժամանակ իր նստավայրն էր դարձրել Գանձասարի եկեղեցին: Նա միշտ իր հույսն ու հավատն է ներշնչել մեզ՝ վանքեցիներիս և բոլորին, որպեսզի մենք էլ մեր հույսն ու հավատը ներշնչենք մեր ապագա սերնդին՝ Աստծո և Արցախ աշխարհի անկախության ու ճանաչման համար:

Պարգև արքեպիսկոպոս Մարտիրոսյանը

2017թ. հունիսի 23-ին մեծ հանդիսությամբ նշվել է Գանձասարի վանքի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման 777-ամյակը: Միջոցառմանը ներկա էին Հայաստանի և Արցախի ղեկավարները:

2015 թվականի նոյեմբերի 22-ին Վանք գյուղում Գանձասարի եկեղեցու հարևանությամբ կատարվեց Մատենադարանի բացում, որին մասնակցեցին թե՛ Հայաստանի, թե՛ Արցախի բոլոր ղեկավարները: Մատենադարանի ցուցասրահի պատասխանատու նշանակվեց Վանքի միջնակարգ դպրոցի շրջանավարտ, ռուսաց լեզվի ուսուցչուհի Ֆլորա Ալեքսեյի Ահարոնյանը:

Գանձասարի եկեղեցում երկար տարիներ քահանա են աշխատել Տեր-Հովհաննեսը, Տեր-Մինասը, Տեր-Գրիգորը, իսկ ներկա դրութ-

Գանձասարի Մատենադարանի բացումը (2015թ. նոյեմբերի 22)

Վանահայր և հոգևոր հովիվ՝ Տեր Հովհաննես քահանա Հովհաննիսյանը

յամբ՝ եկեղեցում որպես քահանա աշխատում է Սահակ Վարդապետ Շաքարյանը և սարկավագ՝ Արթուր Ահարոնյանը: Տեր-Մինասը տեղափոխվեց Ստեփանակերտ: Ժողովրդի հավատքը էլ ավելի ամրակուռ և հաստատուն դարձավ, երբ թշնամու բազմաթիվ ռումբերը դիտավորյալ ուղղում էին եկեղեցու վրա, բայց ոչ մի անգամ չկարողացան վնասել եկեղեցուն, ռումբերը ընկնում էին այլ վայրեր և ավերում ազատ տարածքներ: Ռումբերից մեկը խրվեց Գանձասարի պատի մեջ, բայց Գանձասարը չպայթեց, քանի որ նա Աստծո տունն է: Իսկ Տեր-Հովհաննեսը Աստծոն և եկեղեցու նվիրյալ քահանա էր:

Նա իր հավատքով ժողովրդի մեջ սերմանեց ազնվություն, մաքրություն և սեր: Մինչև 2009 թ. մեծ հեղինակությամբ աշխատեց Գանձասար եկեղեցում: Մեծ աշխատանքներ կատարեց եկեղեցու բարգավաճման համար: Իր նվիրված ու հայրենասեր, ազգանվեր աշխատանքի համար պարգևատրվեց «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանով:

Վանք գյուղում կան շատ հավատացյալներ, բայց իրենց հավատով և սրբությամբ աչքի են ընկնում երկու կանայք... Ալվարդ Մկրտչյան՝ մաթեմատիկայի ուսուցչուհի, Շողիկ Գրիգորյան՝ վերաբնակչուհի, օտար լեզվի ուսուցչուհի: Նրանք միշտ մասնակցում են պարտադիր բոլոր եկեղեցական ծեսերին, կատարում են Աստծո բոլոր պատվիրանները և օրինակ են ծառայում իրենց ազնվությամբ և մաքրությամբ մատաղ սերնդի դաստիարակությանը: Երբ ես ցանկանում եմ համեմատել մինչպատերազմյան հավատքը՝ հավատքը պատերազմի ժամանակ և պատերազմից հետո՝ ահռելի սարերի տարբերություն կա: Նախ ԽՍՀՄ-ի ժամանակ հակաքարոզչություն էր գնում Աստծո հավատքի նկատմամբ, որը և ձեռնտու էր Ադրբեջանին, իսկ պատերազմի ժամանակ և նրանից հետո մենք հավատք ձեռք բերեցինք, մեր հույսն ու հավատը վստահեցինք Աստծոն և համոզվեցինք, որ մեր հավատքն ու հույսը փրկեցին մեզ այդ անար-

դար պատերազմում: Համենայնդեպս, պետք է դաստիարակչական աշխատանքներ տանել հասարակության և մատաղ սերնդի մեջ, որ էլ ավելի հավատով ու հույսով մոտենան եկեղեցուն: Մեր Գանձասար եկեղեցին իր գրաբարյան գրերով ապացուցեց աշխարհին և անմակարդակ մեր դարավոր թշնամուն, որ այստեղ ալբաններ չեն ապրում, այլ մաքուր և բնիկ արցախցիներ:

ԱՌՅՈՒԾԱԳՈՐԳ

Հասան-Ջալալյանների տոհմական պատկանելության գորգը կոչվում է «Առույծագորգ»: Հասան-Ջալալյան տոհմի ժառանգներից բացի, ուրիշ որևէ մեկը իրավունք չի ունեցել ունենալու նույնանախշ գորգ, դա միայն ժառանգական իրավունքով արտոնություն էր, որը պահպանվում էր մինչև այժմ և համարվում շարունակական կարգ:

Տոհմական «Առյուծագորգը» նվիրում էին տոհմի կամ ընտանիքի անդամին, նոր ընտանիք կազմելու դեպքում և համարվում է տան մասունքը:

Պահպանվում է Սաթենիկ Եսայի (Իսաջան) բեկի, Հասան-Ջալալյանի՝ Սարգիս բեկի թոռնուհու գորգը: Մնացածների ճակատագիրը հստակեցված չէ:

Գորգի վրա գունազարդ տարբեր պատկերների վերծանումը մասնագետների խնդիրն է: Սակայն, պատահական չէր կարող լինել առյուծի պատկերները, որ քանդակված են տոհմական տապանատուն-սրբավայրն իր մեջ ներառած Գանձասարի վանքի մուտքի ճակատին և պատկերված են տոհմական գորգի վրա:

Առյուծագորգի առյուծներն ունեն հզոր բաշեր՝ պատկերների համատեղությամբ և կենաց ծառով:

Պատմամշակութային արժեք ներկայացնող Առյուծագորգի պատմությունը պատկանում է Սաթենիկ Եսայի բեկի Հասան-Ջալալյանին

ՇՔԱՄՈՒՏՔ ԱՐԵՎՄՏՅԱՆ

Գանձասարի Սուրբ Հովհաննես Մկրտիչ եկեղեցու արևմտյան շքամուտքի զարդաքանդակները կատարված են ժանեակագործական նրբությամբ: Շքադուռը և նրանից վեր բացված փոքրիկ ուղղանկյուն լուսամուտը, վերջինիս երկու կողմերին հանդիսավոր ու հպարտ կանգնած զույգ արծիվների բարձրաքանդակները ներառված են գեղազարդ շրջանակի մեջ: Այդ արծիվները վանքի պահապան-խորհրդանշաններն են և իրենց ավանդական արմատներն ունեն հին դարերում:

Շքամուտքի դուռը՝արծիվների թառով, երիզված է նույնպես բարձրարվեստ քանդակազարդերով, որոնց մեջ իշխող դեր ունի վեցաթև աստղը:

Ճակատ կիսաշրջանը վարդագույն, մուգ և բաց դեղին բազմերանգ քարերից կազմված դրվագազարդեր են, որ ստեղծում են ծիրանի երանգախաղ: Շքադռան շրջանակների երիզների վրա քանդակված են սրտաձև բուսական նախշեր, որոնք վարսանդապտղային խորհրդանշանի հայտնի զարդերից են:

1216 Թ. ԱՌԱՆՇԱՀԻԿ ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԸ ՀՌՉԱԿՎԵՑ ԱՄԲՈՂՋԱԿԱՆ ԱՐՑԱԽԻ ԹԱԳԱՎՈՐ

«ԲՆԱԿԱՎՈՐ ԻՆՔՆԱԿԱԼ ԲԱՐՁՐ ԵՎ ՄԵԾ ԱՐՑԱԽԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԻ»

1214թ. Ներքին Խաչենի կամ Խոխանաբերդի իշխանությունը Վախթանգ II-ից (Տանգիկ) հետո ժառանգում է նրա ավագ որդին՝ Հասան-(Հայկազ)-Ջալալը և նրանից սերված տոհմը կոչվում է Հասան-Ջալալիտոհմ:

Նույն տարում վախճանվում է մեծ պապը՝ Հաթերքի տեր Վախթանգ Մեծը (Վախթանգ I), որի իշխանությունը նույնպես ժառանգում է Հասան-Ջալալը: Նրան է վստահում նաև Վերին Խաչենի կամ Ծարի (Վայկունիք) իշխանությունը: Եվ այսպես, Առանշահիկ տերերի եռաձյուղ իշխանական տիրույթների միավորված գահին բազմում է Առանշահիկ Վախթանգ II-ի և Բագրատունի Խորիշահի (Զաքարե Բագրատունու թոռ, Սարգիս Զաքարյանի դուստր, Զաքարե և Իվանե ամիրպալասարների քույր) որդի Հասան-Ջալալը: Պատմական աղբյուրներում և տարբեր արձանագրություններում նշված են Հա-

սան-Ջալալի տիտղոսները. «Իշխան Խաչենոյ», «Տեր Խաչենոյ», «Տեր Խոխանաբերդոյ և Խաչենոյ», «Մեծ Իշխան», «Ինքնակալ Իշխանաց Իշխան, տեր Խաչենոյ», «Խաչենաց Իշխան Արքայաշուք», «Մեծ իշխան Խաչենոյ և Կողմանցն Արցախոյ», «Մեծ կողմնակալ Աղուանից», «Իշխան Խաչենոյ և Առանա», «Բարեպաշտ արքա Ջալալ», «Թագավոր Ջալալ Դովլա», «Արքայ Ջալալ Դոլա»:

Այս բոլոր տիտղոսները հաստատում են բուն հին Արցախի տարածքի վրա Հասան-Ջալալի գահերեցությունը, մանավանդ, որ նրանք զտարյուն ժառանգներ են Առանշահիկ տոհմի, որը երկու անգամ թագավորություն է վերահաստատել բռնակալ տերությունների աքցանի մեջ, մեկ Վաչագան Բարեպաշտ թագավորի ձեռքով, մեկ էլ Համամ Բարեպաշտ թագավորին:

Աղբյուրները նրան ներկայացնում են ամբողջ Խաչենի, Արցախի, Առանի Մեծ իշխանի ու թագավորի:

ԲԱԳՐԱՏ ՈՒԼՈՒԲԱԲՅԱՆ

ԿՏԱԿ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ

1240 թ. Գանձասարի Ս.Հովհաննես Մկրտիչ եկեղեցու օծման ժամանակ, Հասան-Ջալալ Մեծի ուխտի համաձայն՝ նրա և միաբանության կողմից, Ներսես կաթողիկոսի հայրապետությամբ, նշանակվեցին պատարագներ:

Կտակը փորագրված է տաճարի ներսում, հյուսիսային պատի վրա: Բաղկացած է 27 տողից, ամբողջ պատի լայնությամբ, որով խոսում է ինքը՝ Հասան-Ջալալ Դոլան՝ «Բնակավոր ինքնակալ բարձր և մեծ արցախական աշխարհի թագավոր, Խոխանաբերդի յոթնասահման նահանգաք»:

Գանձասարի կառուցումը սկսեցին ՈԿԵ (1216)թ. երբ հասան արևելյան լուսամուտին մայր Խորիշահը կրոնավորելու գնաց Երուսաղեմ, Աբգար թագավորի կնոջ՝ Հեղինե թագուհու նման երկար տարիներ ճգնեց Հարության տաճարում, այնտեղ էլ «Հանգեաւ ի Քրիստոս լուսո վկայութեամբ և անդէն պահեցավ: Եվ անդեն մեռավ, զոր Աստուած փառավորեաց զփառավորիչն իր՝ լոյս կամարաձև կացեալ ի վերայ գերեզմանին առ ի յորդորել զայլս ի նոյն բարեգործութիւնս»:

Կտակով Հասան-Ջալալը եկեղեցիները հարկերից ազատ է հայտարարում և միաբանության կամքով նշանակում պատարագներ: Արձանագրությունը փորագրել է Հովասափ Միայնակեցին:

Կտակ. 1240 թիվ, ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼ ՄԵԾԻ ուխտը

ՀԱՎԱՊՏՈԿ

Ավարայրի սրբազան պատերազմին (451թ.) մասնակցելուց հետո Առանշահիկ նախարարական տան ճյուղերից մեկի՝ Մեծ Առանքի (Խաչենի) Խաղբակյան-Պռոշյան տոհմի նախահայր Բակ իշխանը հանդիմանեց ուրացող Վասակին, հիմնվեց Հավապտոկ (Հավապտուկ) բերդում:

Նրա ժառանգներից Վասակ Պռոշը թուրք-սելջուկյան հրոսակների դեմ մղած ճակատամարտում գործած սխրագործությունների համար, որպես «Արեանգինք», 1201- 1203թթ., տիրակալության ժառանգական իրավունքով, Զաքարյան տիրակալներից նոր տիրույթներ ստացավ Սյունիքում և Արարատյան նահանգում՝ «Ի Գառնոյ մինչև Բարգուշատ» և դարձավ «կողմնակալ Ի Վայոց Ձոր գավառիս»: Իսկ Հավապտոկը մնում է Վախթանգ Տանգիկին ու կնոջը՝ Բագրատունյանց տոհմից Սարգիս Ամիրսպասալար Զաքարյանի դուստր Խորիշահին և նրանց ժառանգներին: Հավապտոկ վանքին՝ իր տոհմական այդ տապանատանը ընծայաբերած մեծ Ավետարանի հիշատակարանում իշխանուհի Վանենին ներկայանում է որպես «թոռն Բակ իշխանի», որը «կեցեալ բարեպաշտությամբ և քրիստոնեական հավատով մինչև յայս բարեպաշտ իշխանս Ջաջուռ և Ի սմին որդիացեալս քրիստոսասերս Վանենի»:

Հավապտոկ

ԴԱՐՊԱՍՆԵՐ

«Դարպասները Հասան-Ջալալյան մեծահամբավ տոհմի ապարանն է, որը գտնվում է Վանք գյուղի հարավային հանդեպ Խաչեն գետակի աջ կողմի բարձրության վերայ և Հավապտուկ վանքի արևմտեան կողմում: Մի ընդարձակ շինութիւն է այս, որ իւր մեջ ունի շատ սենեակներ մի քար ու կիր պարսպի մեջ: Ջալալ-Դոլայի նստոց ապարանիս մեջ ավելի ուշագրավ է ընդունարանն ու մի այլ սենյակ, վորք ներկայացնում են ժամանակին ճարտարապետութեան և ճաշակի ոճը:

Բարձրաշէն, թաղակապ ու գեղեցկատես են սենյակները: Ապարանիցս մի քանի քայլ վար, մի շարքի վերայ շինուած է երկու եկեղեցի: Անհայտացած են ապարանի և տաճարներիս արձանագիր քարերը»:

ՄԱԿԱՐ ԵՊՍ.
ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑ

Գանձասարի եկեղեցին մեծ նշանակություն է ունեցել ամբողջ հայ ժողովրդի համար, առանձնապես՝ Արցախ աշխարհի համար: Նա միշտ հաստատել է մեր արմատները, հաստատում է և կհաստատի դարեր շարունակ:



Գանձասար



ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ԲՆԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ

Վանք գյուղը գտնվում է Արցախի Մարտակերտի շրջանում՝ շրջկենտրոնից 53 կիլոմետր հարավ-արևմուտք՝ ծովի մակարդակից շուրջ 1100մ բարձրության վրա: Գտնվում է Գանձասարի ստորոտին, Խաչեն գետի ձախ ափին: Տարածքը՝ 2237 քառ.մետր: Վանք գյուղի դիրքը լեռնային է: Դրա համար մշակովի հողատարածքները շատ քիչ են, չեն հերիքում բնակչությանը, կլիման խոնավ է, թեկուզ ջրային ռեսուրսները շատ են, բայց գյուղը տարիներ շարունակ ունեցել է ոռոգման ջրի պահանջ: Ըստ երևույթին՝ Վանք գյուղը իր հիմնադրման սկզբնական շրջանում նույնպես կրել է Գանձասար անունը: Այսինքն՝ գյուղը հիմնադրվել է 9-րդ դարում: «Հնում մեծ գյուղ է եղել, գրում է Ս. Բարխուդարյանը, այդ էր վկայում իրար կից զույգ եկեղեցիների և գավիթի ավերակները, գերեզմանատունը և արձանագրությունների բովանդակությունը»:

ՀՆԱԳՈՒՅՆ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԻՑ ՄԻՆՉԵՎ 1920 Թ.

Գլուխ II

Վանք գյուղն իր հիմնադրման սկզբնական շրջանում նույնպես կրել է Գանձասար անունը: Ահա թե այդ մասին ինչ է գրված «Հայկական սովետական հանրագիտարանում»: «Գանձասար գյուղ, Մեծ Հայքի Արցախ նահանգի Խաչեն գավառում: Գտնվում է Խաչենա գետի ձախ ափին Գանձասարի վանքից 1կմ հյուսիս: Հիշատակվում է սկսած 9-րդ դարից: 10-րդ դարում Արցախի և Ուտիքի աշխարհիկ և հոգևոր տերերը այստեղ են դիմավորել Անանիա Մոկացի կաթողիկոսին, գումարել ժողով, որը դատապարտել է Արևմտյան Հայաստանի հոգևոր թեմերում եղած դավանաբանական մոլորությունները, ամրապնդել հայոց եկեղեցու միասնությունը: 949թ. հայ քաղքեդոնական վեճերը հարթելու նպատակով, այստեղ է գալիս հայոց հայրապետ Անանիա Ա Մոկացին: Գանձասարի տարածքի Աթախ վայրում, որտեղ այդ ժամանակ բնակվում էին բնակիչներ, նրան դիմավորում է Խաչենի գահերեց Իշխան Գրիգորը: Հենց Աթախ կոչվող տարածքում ապրում էր Գրիգորյան տոհմը: 1140 թ. սելջուկ թուրքերը հարձակվում են Խաչենի իշխանության վրա, այդ մարտերում զոհվում է Գրիգորյան տոհմի նահապետ՝ Գրիգոր Իշխանը: *(Ըստ՝ Մխիթար Գոշի):*

Գանձասարը հետագայում եղել է Խաչենի իշխանության՝ Հասան Ջալալյան գյուղի աթոռանիստը, գյուղն այժմ էլ գոյություն ունի և կոչվում է Վանք»: *(Հայկական ՍՍՀ հանրագիտարան, հատոր 2, էջ 686):*

1745թ. գյուղը կրում էր «Վանքեն շեն» անվանումը, 1832-1833թթ.՝ Ալվանքլու, 1853թ.՝ Գանձասար, 1890թ.՝ Վանք, Վանք գեղ, Վանքեն շեն, 1910թ. օգոստոսից՝ Գանձասար, 1922թ. մայիսի 11-ից՝ Վանքլու, 1988թ. փետրվարից՝ դարձյալ Վանք: Նախկինում գյուղի բնակիչները բնակվում էին Գանձասարի վանքի մոտ, որտեղ գյուղատեղիի մնացորդները պահպանվում են: Ի դեպ, ներկայիս բնակավայրը բաղկացած էր երկու առանձին թաղամասերից՝ «Հյունահող» ու «Գոմակալ» անուններով, որոնք կազմում են համապատասխանաբար գյուղի ներքին և վերին թաղերը»: *(Մակար Բարխուդարյան, «Արցախ», էջ 110-111):*

Վանք գյուղից արևելք գետի ձախ ափի բարձրադիր հարթության վրա տեղադրված է Պառավաձոր գյուղատեղին, որը կոչվում էր նաև Քարխանի հարդ, որովհետև գյուղատեղից վերև լեռնալանջին կա քարահանք, որտեղից առաջներում ջրաղացի քարեր են կտրել: Վանք գյուղը գտնվում է Խոխանաբերդի և Հավապտոկի հյուսիսային մասում՝ նրանցից բաժանվելով Խաչեն գետով: Հիմնական բնակավայրը համարվել է Վարդանաթաղը, որի մասին հիշատակություններ կան 13-րդ դարից: Բնակիչները IX-X դարերում փոխադրվել են Գանձասարի վանքի մոտ գտնվող բնակավայրերից: Նախկինում գյուղը բաժանված էր երկու թաղի. ներքինը՝ Հունահող և վերինը՝ Գոմակալ: Ժամանակի ընթացքում միացան և վանքի անունով կոչվեց Վանք: Այսօր էլ գյուղացիները ասում են վերին շեն և ներքին շեն: Գյուղում մինչ այսօր կար տարրական կիսավեր ակումբ, որը ներկա դրությամբ ավերակ է դարձել և որը նախկինում Աբրահամ Բեկ Հասան-Ջալալյանի տունն է եղել: Հետագայում գյուղը այդ տունը օգտագործել է որպես ակումբի շենք: Գյուղի առաջին բնակիչները եղել են նաև Հասան-Ջալալյանները, գյուղում հինավուրց տոհմ է Բաղրամյանների տոհմը, նրանց արմատները ծագել են Արևմտյան Հայաստանի Ղարս քաղաքից եկած վերաբնակիչ Բաղրամից 1720 թվականին: Գյուղում ապրում են հետևյալ տոհմերը՝ Ջալալյաններ, Բաղրամյաններ, Բալայաններ, Ահարոնյաններ, Գրիգորյաններ, Բեգլարյաններ, Սարգսյաններ, Օհանյաններ, Հակոբյաններ, Կաֆյաններ, Հարությունյաններ, Մկրտչյաններ, Թևոսյաններ, Լազարյաններ,Պողոսյաններ, Ավանեսյաններ, Ասրյաններ, Բաղդասարյաններ, Մեժլումյաններ, Գևորգյաններ,Ղալայաններ, Լալայաններ, Առաքելյաններ, Չիլինգարյաններ, Պետրոսյաններ, Ղազարյաններ, Սավյաններ, Սաղյաններ, Աբրահամյաններ, Գուրգենյան վերաբնակիչներ, Թովմասյաններ, Բաբայաններ, Հայրապետյաններ, Ազատյաններ, Սողոմոնյաններ, Սահակյաններ, Գալստյաններ, Մակյաններ, Հովհաննիսյաններ, Ավետիսյաններ, Ավագյաններ, Մովսիսյաններ, Քարդումյաններ,Դանիելյաններ:

ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

Վանական համալիր Գանձասար՝ 1216-1238թթ., Գավիթ՝ 13-րդ դար, Խաչքար՝ 1181թ., Խաչքար՝ 9-րդ դար, Խաչքար, Խաչքար (Վախթանգի)՝ 1202թ. Տապանաքար՝ 1886-1911թթ., Գերեզմանոց, «Գանձասար»՝ 18-20դդ., Խաչքար՝ 1563թ., Ամրոց-բնակատեղի, «Խոխանաբերդ»՝ 7-17դդ., Վանական համալիր, «Հավապտոկ»՝ 1163թ. գյուղից 1.6 կմ հր. «Ռուզանի բերդ» տեղավայր, Գերեզմանոց խաչքարերով «Հավապտուկ»՝ 12-13 դդ., գյուղից 2 կմ հր-ամ, Խաչքար «Հավապտուկ»՝ 13դ., Խաչքար «Հավապտուկ»՝ 1181թ., Ապարանք «Դարպասներ»՝ 13դ. գյուղից 3 կմ հր-ամ «Դարպասներ»՝ կոչվող վայրում, Շինություն «Դարպասներ»՝ 13դ., Մատուռ «Դարպասներ»՝ 13 դ., Գյուղատեղի «Պառավաձոր»՝ 9-13 դդ. գյուղից 3.6 կմ հր-ամ «Քեարխանի հարթ»՝ տեղավայրում, Վանական համալիր «Պառավաձորի-վանք»՝ 12-13 դդ., գյուղից 3 կմ հր-ամ, Կոթող «Պառավաձոր»՝ 12-րդ դ., Հուշարձան երկրորդ աշխարհամարտում և Արցախի պատերազմում զոհվածների հուշարձան՝ 1960-ական թ. և Արցախյան պատերազմից հետո ընկած ժամանակաշրջան՝ 2017թ.:

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ

Պառա հող, Սայունց կյումեր, Դվութա հող, Տանձոտ, Կռանեն տեղ, Մարին կյումեր, Քոլատակ, Խնձարա հող, Վարդիհասունց բաղ, Քարա հանք, Կոքսի կածան, Նիտակա հող, Նովեր, Կարմիր քար, Մեյդան,Պուժկեն յալ, Շլորոտ խութ, Դերին թումբ, Մղեն քար, Պուզտի, Քոհնա բաղ, Էրգան հող, Աթաղ, Կրկժնահող, Պառվաձոր, Եղիցի յալ, Պապին կյումեր, Ակուփի քար, Իրիցի կումեր, Պլուրա քար, Լևոնավան, Շեպնոտ յուրդ, Մուխաթիկ, Ղեղա մարք, Կիրատափ, Խանջալ խաչ:

ԳԵՏԵՐԸ

Խաչեն գետ, Կնձակա գետ, Վանքի գետ, Մղեն քարեն գետ:

ՎԱՅՐԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԸ

Արջ, գայլ, աղվես, շակալ, լուսան, նապաստակ, վայրի այծ, եղնիկ, բախրա, վայրի խոզ, մացառախոզ, փորսուղ, սկյուռ, վայրի կատու, ոզնի:

ԳԵՏԵՐԻ ՁԿՆԱՏԵՍԱԿՆԵՐԸ

Կարմրախայտ, կողակ, բեղլու, տփլկվեսի, շնաձուկ, ջրաշուն:

ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Պետին աղբյուր, Հացին աղբյուր, Ղզիող, Գանձասարի աղբյուր, Սայունց աղբյուր, Գելջուկի, Գադուկի, Մեյդանի, Տզզանի աղբյուրները, Զարդարին աղբյուր, Գուլասին տակին աղբյուր, Մռավեն աղբյուր, Ռուզանի աղբյուր, Ավունց աղբյուր, Սահլա տափեն աղբյուր, Տունգին աղբյուր, Պեխեն աղբյուր, Միշայի աղբյուր:

ԳՅՈՒՂԱՄԻՋՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

Ալոն Բաղրամյանի աղբյուր, Սարգիսջանի աղբյուր, Ակումբի աղբյուր, Բուլվարի աղբյուր, Վարդանաթաղի աղբյուր, Արցախյան պատերազմի զոհվածների աղբյուր, Գուրգեն Հայրապետյան պապիկի աղբյուր, Վետերանների հուշաղբյուր (կառուցվել է 2003թ.՝ Ֆեդյա Օհանյանի ղեկավարությամբ:

ԱՆՏԱՌՆԵՐԻ ԹՌՉՈՒՆՆԵՐԸ

Միրհավ, արծիվ, բու, ագռավ, ղրղի, փայտփորիկ, մոշահավ, ծիծեռնակ, չարդ, ձկնկուլ, չղջիկ, կկու, պապաձիշտ, գայլագռավ և այլն:

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԿԱՐԳԵՐ

19-րդ դարի վերջին վանքեցիներն՝ իրենց ներկայացուցիչներն ունեին պրոլետարական Բաքվում, Երևանում, Թիֆլիսում և Ռուսաստանի շատ քաղաքներում, որոնք չէին կարող անտարբեր մնալ երկրով մեկ կատարվող քաղաքական իրադարձություններին, բանվոր դասակարգի ազատագրական պայքարի հանդեպ և այդ ամենը չտեղափոխել հարազատ ծննդավայրը: Դեռևս 1905թ. ռուսական առաջին հեղափոխության տարիներին Վանքում նկատելի դարձան սոցիալական ընդվզումները, որոնք արտահայտվում էին գյուղացիների առանձին բողոքներում, բեկական կարգերի հավերժության մասին ստեղծված առասպելների հերքման կոնկրետ փաստերով: Գյուղը, որ թաղված էր կուսական անտառների, անդնդախոր ձորերի մեջ՝ քաղաքական իր զարթոնքն էր ապրում 20-րդ դարի սկզբներին: Գյուղից լավագույն զավակները ձեռքերը ծալած չէին սպասում հեղափոխությանը: Լազար Ջումշուդի Գալստյանը մասնակցել է պրոլետարիատի ազատագրական պայքարին, կռվել Ստեփան Շահումյանի դրոշի ներքո, հատուկ առաքելությամբ գյուղ է վերադառնում 1918թ.: Նշանակալից են նրա ծառայությունները գյուղում՝ սովետական կարգերի ստեղծման գործում: Հենց նա էլ դառնում է գյուղի հեղկոմի առաջին նախագահը: Հայրենի ծննդավայրի ու Խաչենի հովտի մյուս գյուղերի համար հիշատակման համար արժանի գործ է կատարել 1907 թվականից ՍՄԿԿ անդամ Միքայել Առստամի Ավանեսյանը: Նա նույնպես եղել է գյուղի հեղկոմի առաջին նախագահներից, որի անվան հետ կապված են նոր կարգերի հողաշինարարական մի շարք աշխատանքներ: Հեղկոմի և ապա գյուղական սովետի նախագահն էր Լազար Գալստյանի, Սիմոն Ղալայանի, Խաչատուր Չիլինգարյանի, Վարդան Լազարյանի, Արտաշ Գրիգորյանի, Վարդան Պողոսյանի, Համբարձում Սիմոնյանի, Միրզա Ասրյանի ծառայությունները անմոռանալի էջ են կազմում Վանք գյուղի պատմության մեջ: Քանի-որ խոսք է բացվել տեղական իշխանությունում ծառայություն կատարած մարդկանց մասին, նշենք, որ գյուղական սովետի գործկոմների նախագահներ են աշխատել՝ Ղազար Չիլինգարյանը, Խաչատուր Համբարձումյանը, Ասծատուր Բաբայանը,Գաբրիել Բաղրյանը, Գերասիմ Մարտիրոսյանը, Վիլեն Բաղրամյանը, Կարո

Ղուլյանը, Աշոտ Մարտիրոսյանը, Գուրգեն Լազարյանը, Մեսրոպ Պողոսյանը, Ռուբեն Սարգսյանը, Աշոտ Մելքումյանը, Լազար Սարգսյանը, Բերման Մկրտչյանը, Ծուրա Բալայանը, Վազգեն Բաղրամյանը: Կոլեկտիվ տնտեսությունը կազմավորվել է 1929թ. աշնանը, որի առաջին նախագահն էր Հակոբջան Գրիգորյանը:

Կոլտնտեսությունը սկզբից կրում էր հայտնի հեղափոխական բանդիտիզմի և կուլակության զոհ Սաուտկինի անունը, որը 1930թ. վերանվանվեց Այոշա Ջափարիձեի անվամբ: 1950թվականին կոլտնտեսությունը խոշորացվում է Գառնաքար և Ծահմասուր գյուղերի հաշվին և կրում էր 26 կոմիսարների անունը: 1977 թվականին երկրորդ անգամ խոշորացվում էր տնտեսությունը ընդունելով Ծմակահող և Նարեշտար գյուղերը: Վանք գյուղի տնտեսությունը այդ ժամանակ արտադրում էր տարեկան 520 տոննա կաթ, 800 տոննա հաց, 35 տոննա ծխախոտ, 70000 հատ ձու, 96 տոննա միս: Բայց խանութներում ոչինչ չկար, ամեն ինչ գնում էր Ադրբեջան, իսկ մենք այդ ամենը գնում էինք Հայաստանի խանութներից:

Տարբեր տարիների տնտեսությունների նախագահներ և սովխոզի տնօրեններ են աշխատել Հակոբջան Գրիգորյանը, Բաղրամ Բաղրամյանը, Քաջիկ Լազարյանը, Խաչիկ Ղալայանը, Հովսեփ Հովսեփյանը, Վազգեն Ահարոնյանը, Մանվել Աբրահամյանը, Բորիկ Հակոբյանը, Արտավազդ Սարգսյանը, Ֆեդյա Օհանյանը և Անդրեյ Սարգսյանը: Սկզբում 1929 թվականից տնտեսությանը անդամագրվեցին 90 ընտանիքներ, սակայն 1930թ., փետրվարին կոլտնտեսությունում հաշվում էր ընդամենը 48 ընտանիք: ՏՈԶ-ը, որը կազմված էր 7 ընտանիքից դարձավ նորաստեղծ կոլտնտեսության միջուկը՝ Խաչատուր Չիլինգարյանի գլխավորությամբ: Առաջին կոլտնտեսականներն էին՝ Վարդան Բաղրամյանը, Տիգրան Թևոսյանը, Ավանես Պողոսյանը, Դադաշ Բաղրամյանը, Աթա Սիմոնյանը, Միրզա Բաղրամյանը, Աթաբեկ Ղալայանը, (սա այն Աթաբեկն էր, որ նորաստեղծ կոլտնտեսությանը հանձնեց իր 90 խոզը, 2 կովը, 6 եզը, 1 գութանը, 3 արորը), Արսեն Թևոսյանը (նա էլ հանձնեց իր 2 գոմեշը, 3 ձին, 2 գութանը):

Կոլտնտեսության դաշտավարական առաջին բրիգադիրն էր Գեորգի Պողոսյանը, ակտիվ կենսադիրքի մի մարդ, ով գյուղի սոցիալական տնտեսական զարգացման կենդանի հանրագիտարանն էր:

Նորաստեղծ կոլտնտեսության պիոներ բրիգադավարներ էին՝ Հովհաննես Կաֆյանը, Գրիգոր Սողոմոնյանը, Ռուբեն Ղազարյանը, ֆերմաների վարիչներ՝ Արմենակ Հայրապետյանը, Սաշա Բաղդասարյանը, առաջին մեխանիզատորները՝ Հարոն Առաքելյանը, Կոլյա Թևոսյանը, առաջին ավտովարորդները՝ Սերյոժա Հայրապետյանը, Ռաշիդ Բաղրամյանը, Ալյոշա Ահարոնյանը, Շուրա Սահակյանը, Ալբերտ Ասրյանը և ուրիշներ: Դեռևս 19-րդ դարի 60-ական թվականներին Վանքում կային քարաշեն լուսավոր տներ: Իրար հետևից քարաշեն տներ կառուցեցին Ավանես Պողոսյանը, Վահան և Աթանես Ջալալյանները, Աթանես Բեկլարյանը, Բեգի Թևոսյանը, Իսաջանբեկ Ջալալյանը, Աթաջան Ահարոնյանը, Սարուխան Բաղրամյանը և ուրիշներ: Մինչև սովետական կարգերի հաստատումը Վանքում գոյություն ուներ ֆելդշերական կետ, փոստի բաժանմունք, ինչպես նաև արհեստավորական օբյեկտներ:

Գյուղում կուսակցական բջիջ էր հաստատվել 1920 թվականին, որի հիմնադիրն է համարվում Բախշի Հարությունյանը: Կուսակցական աշխատանքների կազմակերպման աջթևայիներ էին Անդրանիկ Հովսեփյանը, Արտաշ Գրիգորյանը, Խաչատուր Չիլինգարյանը, Սամսոն Գևորկովը, Արմենակ Հարությունյանը և ուրիշներ: Նոր կարգերի ամրապնդման համար ակտիվություն է ցուցաբերել 30-ականների կոմերիտականները՝ Արսեն Պողոսյանը, Իսրայել Լազարյանը, Ասրի Ասրյանը, Հակոբ Հակոբյանը և ուրիշներ:

ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՎԱՆՔԵՑԻՆԵՐԸ

Հայրենական մեծ պատերազմին Վանք գյուղից մասնակցել է 313 մարդ, որից զոհվել է 157 հոգի: Տղամարդկանց հետ զենքը ձեռքներին հայրենիքի պատիվը պաշտպանում էին վանքեցի 7 դուստրերը՝ Քնարիկ Սարգսյանը, Վանանուշ Բեկլարյանը, Համեստ Գրիգորյանը, Գոհարիկ Ղալայանը, Աստղիկ Մովսիսյանը, Զաբելա Պողոսյանը և Մարուսյա Թևոսյանը: Հայրենական մեծ պատերազմում զոհվեցին Մակար Հայրապետյանի հինգ որդիները՝ Սերոբ, Աղասի, Ալբերտ, Գրիշա, Միքայել Հայրապետյանները, Հերսիլե Լազարյանի Շահեն, Համբարձի, Վիգեն որդիները, Վարսելի Գրիգորյանի Վաղարշակ,

Մխիթար որդիները, և շատ-շատերը: 1972 թվականին երախտապարտ վանքեցիները գյուղի մուտքի մոտ կառուցեցին հուշարձանկոթող: Հուշարձանված, բռունցքված գյուղ վերադարձան մեր զոհերը, որոնք արդար ու մաքուր հունդի պես մնացել էին կռվի ահեղ ճամբարներում, հանուն Խորհրդային միության:

Նրանք են.

(Անունների հերթականությունը՝ ըստ Վանք համայնքի Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանին զետեղված ցուցակի):

1. Աբրահամյան Ներսես Թ.
2. Աբրահամյան Մուշեղ Ս .
3. Աբրահամյան Նիկիտա Ս .
4. Աբրահամյան Դադաշ Ե.
5. Աբրահամյան Բագրատ Ա.
6. Աբրահամյան Տիգրան Ա.
7. Աբրահամյան Սուրեն Գ.
8. Ահարոնյան Դադիկ Ն.
9. Ահարոնյան Անդրեյ Մ.
10. Ահարոնյան Ասծատուր Ս.
11. Ահարոնյան Խաչատուր Ս.
12. Ահարոնյան Ավանես Ս.
13. Ահարոնյան Սահակ Մ.
14. Ահարոնյան Հայրապետ Ս.
15. Առաքելյան Ավստրի Բ.
16. Առաքելյան Շահեն Բ.
17. Առաքելյան Արսեն Մ.
18. Առուշանյան Նիկոլայ Ա.
19. Ասրյան Դմիտրի Հ.
20. Ասրյան Սուրեն Ղ.
21. Ասրյան Միրզա Պ.
22. Ասրյան Ասրի Ի.
23. Ասրյան Թյունի Վ.
24. Ասրյան Մռավ Ս.
25. Ասրյան Արմեն Ս.
26. Ասրյան Ջանո Դ.
27. Ասրյան Գուրգեն Հ.
28. Ասրյան Արմավիր Հ.
29. Ավագյան Աբել Ա.
30. Ավագյան Գրիշա Ա
31. Ավանեսյան Ավանես Մ.
32. Ավանեսյան Վահան Ա.
33. Ավանեսյան Արտեմ Մ.
34. Ավանեսյան Ջավադ Շ.
35. Ավանեսյան Ներսես Ի.
36. Ավանեսյան Բաբա Ա.
37. Ավանեսյան Սուրեն Խ.
38. Ավանեսյան Գրիշա Ա.
39. Ավետիսյան Ստեփան Թ.
40. Ավետիսյան Ավագ Պ.
41. Ավետիսյան Փարավոն Պ.
42. Ավետիսյան Կոլա Պ.
43. Բալայան Վաղարշակ Ա.
44. Բալայան Եղիազար Ա.
45. Բաղդասարյան Առաքել Ե.
46. Բաղդասարյան Սաշա Ն.
47.Բաղդասարյան Ջիվանշիր Ն.
48. Բաղդասարյան Ջալալ Ն.
49. Բաղդասարյան Էմիլ Մ.
50.Բաղդասարյան Խաչատուր Մ.
51. Բաղդասարյան Մեսրոպ Մ.
52. Բաղդասարյան Մուխան Մ.

53. Բաղրամյան Միքայել Դ.
54. Բաղրամյան Արմենակ Դ.
55. Բաղրամյան Սավադ Դ.
56. Բաղրամյան Շահնազար Ս.
57. Բաղրամյան Բաղրամ Ս.
58. Բաղրամյան Շահեն Մ.
59.Գալստյան Դրաստամատ Դ.
60. Գալստյան Առուստամ Դ
61. Գևորգյան Շահնազար Ս.
62. Գրիգորյան Կոլյա Լ.
63. Գրիգորյան Մխիթար Ս.
64. Գրիգորյան Վաղարշակ Զ.
65. Գրիգորյան Խաչիկ Դ.
66. Գրիգորյան Ասծատուր Դ.
67. Գրիգորյան Ռուբեն Ի.
68. Գրիգորյան Խորեն Հ.
69. Գրիգորյան Շահնազար Ս.
70. Գրիգորյան Սարո Մ.
71. Թովմասյան Ալավերդի Դ.
72. Թովմասյան Մեսրոպ Գ.
73. Իվանյան Վոլոդյա Դ.
74. Լազարյան Պողոս Հ.
75. Լազարյան Հովհաննես Հ.
76. Լազարյան Շահեն Ս.
77. Լազարյան Համբոյ Ս.
78. Լազարյան Վիլեն Ս.
79. Լազարյան Շահնազար Ս.
80. Լազարյան Արմենակ Ս.
81. Լազարյան Հրանտիկ Տ.
82. Կաֆյան Հովհաննես Մ.
83. Կաֆյան Կոլյա Մ.
84. Կաֆյան Խաչի Մ.
85. Կաֆյան Համո Ս.
86. Կաֆյան Սամսոն Բ.
87. Կաֆյան Հարոն Բ.
88. Կաֆյան Մուխան Ա.
89. Հակոբյան Մուշեղ Ի.
90. Հակոբյան Գրիշա Մ.
91. Հակոբյան Ռուբեն Ա.
92. Հակոբյան Բաղդասար Ա.
93. Հակոբյան Սավադ Դ.
94. Հակոբյան Վարդան Ս.
95. Հակոբյան Համբարձում Ա.
96. Հակոբյան Հակոբ Մ.
97. Հակոբջանյան Սերյոժա Ա.
98. Հայրապետյան Անդրեյ Վ.
99. Հայրապետյան Արտաշ Ր.
100. Հայրապետյան Արմեն Ս.
101. Հայրապետյան Արծվիկ Մ.
102. Հայրապետյան Սերոբ Մ.
103. Հայրապետյան Աղասի Մ.
104. Հայրապետյան Ալբերտ Մ.
105. Հայրապետյան Աբել Մ.
106. Հայրապետյան Գրիշա Մ.
107. Հայրապետյան Փաշա Ա.
108. Հայրապետյան Սերոբ Ս.
109. Հայրապետյան Ահարոն Ս.
110. Հայրապետյան Գրիշա Գ.
111. Հարությունյան Բախտի Ա.
112. Հարությունյան Գրիշա Ա.
113. Հովսեփյան Շմավոն Մ.
114. Ղալայան Սամսոն Ս.
115. Ղալայան Սերյոժա Ա.
116. Ղալայան Կոլա Ա.
117. Ղալայան Ժորա Ա.
118. Ղալայան Միրզա Ս.

119. Ղալայան Սարգիս Պ.
120. Մարտիրոսյան Սամսոն Ս.
121. Մարտիրոսյան Սանթրի Ս.
122. Մեժլումյան Սարգիս Ա.
123. Մկրտչյան Պողոս Վ.
124. Մովսեսյան Աշոտ Դ.
125. Մովսեսյան Գրիշա Ս.
126. Մովսեսյան Սուրեն Ս.
127. Չիլինգարյան Արտաշ Մ.
128. Չիլինգարյան Արմենակ Մ.
129. Պողոսյան Սամսոն Ս.
130. Պողոսյան Բաղդան Ի.
131. Պողոսյան Արսեն Ա.
132. Պողոսյան Յաշա Ա.
133. Ջալալյան Աստատուր Գ.
134. Ջալալյան Ներսես Գ.
135. Ջալալյան Բաղդան Ս.
136. Ջալալյան Միքայել Մ.
137. Ջալալյան Գրիգոր Գ.
138. Ջալալյան Սերյոժա Ա.
139. Ջալալյան Հովհաննես Ա.
140. Ջալալյան Արսեն Ֆ.
141. Ջալալյան Աշոտ Տ.
142. Ջալալյան Վարդան Տ.
143. Ջալալյան Արամ Տ.
144. Ջալալյան Վարդան Ա.
145. Ջալալյան Սերյոժա Ա.
146. Սահակյան Մեսրոպ Ս.
147. Սահակյան Վանի Մ.
148. Սահակյան Սարգիս Հ.
149. Սարգսյան Գրիշա Հ.
150. Սարգսյան Բախշի Ա.
151. Սարգսյան Բախշի Ջ.
152. Սարգսյան Ջալալ Ջ.
153. Սիմոնյան Ավանես Ա.
154. Սիմոնյան Առաքել Ա.
155. Սիմոնյան Ալավերդի Ա.
156. Սևյան Բախշի Գ.
157. Օհանյան Խաչի Խ.

Գյուղից Հայրենական մեծ պատերազմին ակտիվ մասնակցություն են ունեցել Սուրեն Գրիգորի Ազատյանը, ով 1945 թվականին մասնակցել է Բեռլինի գրավմանը և ստացել գնդապետի կոչում: Մեսրոպ Պողոսյանը հայրենական պատերազմի I կարգի հաշմանդամ է տասնյակ մեդալների ասպետ, 95 տարեկան և գյուղի վերջին կենդանի ներկայացուցիչն է հայրենական մեծ պատերազմից:

Հայրենական պատերազմից հետո մեր գյուղից ահագին այրեր զոհ գնացին ստալինյան քաղաքականությանը, նրանք էին՝ Բաղրամ Բաղրամյանը, Երեմ Բաղրամյանը, Բախշի Հակոբյանը, Երվանդ Իվանյանը, Արսեն Մարտիրոսյանը և ուրիշներ:



Հայրենական մեծ պատերազմում զոհվածների հուշարձանը

ՄԵՐ ԱՎԱՆԴԱՊԱԾՏ ՍՐԱՄԻՏՆԵՐԸ

1. ՏԱՀՏՈՒԼԱՆՑ ՄԻԾԱ

ՇԱՆԸ ՀԱՑԸ

Ապիրամանց Բենիկը Միշա դայուն հրավիրում ա Երևան, հանցու մին քանի օր ընդեղ պահե, ման ածե, քաղաքեն ծանոթացնե: Ուրան տանը լավ պադրաստություն ա տեսնում, հնգերուցը կանչում, վար կյան Միշա դայուն տեսնան: Լոխ կյամ ըն, նհանցա մինը ուրան նհետ ավչարկա շոն ա պիրում: Հաց ուտելու վախտը մին աման էլ շանը հետի յընն տինում: Միշա դային քինամա բալկոնումը կանգնում, քաղաքին թամաշա անում:

Բենիկը կանչում ա ասում.

-Միշա, լոխ քեզ ըն յեշում, խե կյամ չըս հաց օտենք:

Միշա դային թարս-թարս եշում ա, ասում.

-Ա քեզ մատաղ, մեծ մարթ ըմ, շատ մարթու նհետ ըմ հաց կերած, բայց հալա շան նհետ հաց կերած չըմ, օտել էլ չըմ:

ԵՐԵՎԱՆԱ ՏՈՆԸ

Միշա դային Բենիկանց տանը մի քանի օր էլ պիտար մնար: Մի քշահանա շորերը հվաքում ա, թա՝ շենն ըմ քինամ:

Բենիկը հրցնում ա.

-Միշա, պա խե յըս կանուխ քինամ, քեփիտ հուվ ա նի եկալ, մի քանի օր էլ մնա:

-Չէ, Բենիկ, պա էտ խե հրցնում չըս, թա ամեն քշհանա թոռնըմ քինամ: Ամեն օր քշանում ըմ հայաթ, տաքսի յըմ նստում, իրեք մանեթ տամ քինամ, քաղաքան տյուս պետքերս հոգում, նորից իրեք մանեթ տամ՝ կյամ: Պա, վար մին քանի օր էլ մնամ, ջուբումըս փող չի մնալու:

-Միշա, զուքարանը տանն ա, խե յըս քինամ քաղաքան տյուս:

-Ա քեզ մատաղ, պատեն էս ինգունեն զուքարանն ա, էն ինգունեն կուխնին, պա մարթ կկարա տեղ յա զուքարան մտնե, յա կուխնի: Պա Միշան տհենց ապրածա՞, վար ըստեղ էլհա մնա:

ՊԻՎԱ

Միշա դային առաջին անգամ պիվա յա տեսնում, հրցնում, թա տա հինչ պանա ա: Ասում ըն՝ պիվա յա, խմում ըն սրտները հուվուցընում: Միշա դային մին էրկու բակալ առնում ա, խմում, քեֆը կյամ ա: Հրցնում ա, գյուդում, վար տա հինչա յըն պադրաստում:

Միշա դային տեղատ քինամ ա մին էշի կողքի կանգնում, ասում.

-Ջանետ մատաղ, այ էշ, տու մզանա խիլլա խելունք ըս, առաջ կյարին լոխ տուվս իլալ ուտելիս: Միենգ էս նոր ըմ կլխի ընգնում, վար կյարումը ստի հինար կա:

ՊԼԱՆԸ

Միշա դային ծնվալա Վանքա շենումը: Ուրան իլալ ա 12 խոխա՝ 8-ը տղա, 4-ը՝ աղջիգ: Նա շատ հումորավ, օտող-խմող մարդ ա իլալ: Նրա նախնիներն իլալ ըն ղլեչիք: Ինքն էլ ա ղլեչի իլալ: Սովետական կարգերեն վախտը արհեստավորներին յիրա պլան ըն իլալ տինելիս՝ ամեն ամես պիտի պլանը տային: Պլանը տալի դեպքում չնչին տոկոս աշխատավարձ ըն իլալ տալիս: Միշա դային պլանը կադարելիս չի իլալ: Մին օր կանչալ ըն ուրանց կանտորեն գրասենյակը: Էտ օրեն շրջսովետի քարտուղարն էլ ա տեղ իլալ: Քարտուղարը հրցըրալ ա:

-Միշա, տու լիա մին ուբուռին մարդ ըս, էտ խե՞ պլանտ հանձնում չըս:

-Մատաղ ինիմ բոյետ, պետությունը ուրան ժողովուրդավը, մինգել բանակավն ա ամուր: Տասնըէրկու խոխա յըմ պահում, օթը բանակային ա տառնալու, տրանա լավ պլանի կադարում: Ես աննամուս չըմ, վար մին կամ էրկու խոխա պահեմ, պետության հիմքնըմ ամուր պահում, էլ ինձանա հինչը՞ք օգում:

Շրջսովետի քարտուղարը մին լավ ծիծաղում ա, ասում.

-Միշա, քինա ըշխադե խոխեքդ պահե, պետությանն էլ հինչը կտաս՝ կտաս:

Միշա դային էլ մինչեւ ուրան կյանքի վերչը աշխադալ ա, խոխեքը պահալ, փսըկոտալ, նհետն էլ շենը հինչքան հյուր ա իլալ կյալիս, տնելիս ըն իլալ Միշա դայուն կոխկեն պատիվ տալիս:

ՖՐԱՆՍԱՀԱՅԸ

Մին դոնում մին ֆրանսահայ մարթ ուրան կնգանը նհետ կյամա Վանք՝ «Գանձասարը» տեսնա: Ուրանց նհետ մադար խոխան էլ ըն ինում պիրած: Նհետնեն Ստեփանակերտա մին քանի ղեկավար աշխատողներ էլ ըն ինում եկած: Գյուղխորհուրդի նախագան տահանց տանում ա ըխպուրու ղրաղե պատիվ տամ: Տի վախտեքը Միշա դայուն էլ ըն ինում տնելիս, հանցու խուրուգնեն իփի, համ էլ ուրախ պահե: Հաց ուտելու վախտը էտ ֆրանսահային խոխան օգալ չի հաց օտե՝ ժանգ-ժանգ ա ըրալ, սեղանան հեռի կացալ: Տրա հարսնան մարը ամանը յոր ըն կալալ, խուխեն հետան ինգալ, հանցու մի կտոր էլա ուտըցնեն:

Ըտեղ Միշա դային տեմ չի կացալ, ասալ ա.

-Այ ջանետ մատաղ, էս ղաշանգ կնեգը խէ՞յս մին խուխու դարդան զանիտ ըրալ, խե չըս ինձ նման մին սուրու խուխատար տառալ, հանցու տու չի ամանը յոր օնիս խուխեն հետան ընգիս, նահանք քու ամանեն հետան տառնան:

ՀՈՒՔԱՐԱՆԸ

Միշա դայուն դիրեկտըրը իլալ ա ըռչածորցի (առաջաձորցի) Զաքարյան Արմենը:

Նահանք ուրուր նհետ շատ մոտիկ ըն իլալ, էրկուսն էլ համարյա մին խասյաթի:

Էս Արմենը, մի օր օգում ա Միշա դայուն քյալագ կյա, հանցու հետո իրեսավը կյա, ծիծաղե: Քինամ ա Միշա դայուն կողքը, ասում.

-Միշա, սօր շրջսովետի քարտուղարը կյալու ա շենը, պիրիլականըմ կողքետ հաց տանք: Քինացալ ըմ զուքարանը ստուգալ, շատ եղտուտ ա իլալ: Հենգ մանեթ ըմ քեզ տամ, քինա հունցը օգում ըս մաքրե:

Միշա դային համաձայնվում ա, հենգ մանեթը յոր օնում, քինամ հավաքարարեն քթանում, ասում.

-Արմենը ինձ ղարկալ ա, վար քեզ քիթանամ ասեմ, որ քարտուղարը կյալուվա, քինաս զուքարանը մաքրես: Էսա կյամն, եթե թամուզ չինի, քեզ գործադ հիննական ըն:

Հավաքարարը թայդի-թայդի քինամ ա մաքրում, կյամ Միշին հայտնում, վար գործը ըրալա պրծալ՝ զուքարանը փլստրակի յա տամ: Միշա դային, վար էտ լավ խաբարը սկանում ա, մտնում ա ճաշարան, հենգ մանեթի պան զակազ տամ, օտում, մի խոխա էլ ղարկում Արմենին հետան:

Արմենը կյամ ա, հանցու Միշին անավ շուլուղ անե, զուքարանը մաքրել տալու հետի:

Միշան լիա Արմենին վար տեսնում ա, ասում ա.

-Ա խոխա, օզալ ըս ինձ քյալագ կյաս, յես ըմ քեզ քյալագ եկալ՝ գործը ըրալ ա հավաքարարը, փողդ էլ էսա փորումս:

ՏԱՍԸ ՄԱՐԹ

ՇրջսովետԻ քարտուղարը կյամ ա Վանք, ժողով անում, ժողովուրդեն նհետ հանդիպում, տեսնա հուր հինչ բողոք օնե: Շինացիք հմանչում ըն ուրանց պահանջնեն ասեն, քարտուղարն էլ գիդում ա, թա էն ըն լոխ ապահով ապրում ըն:

Ժողովան ետը կոլխոզի նախագան քարտուղարին տանում ա պատիվ տամ:

Միշա դային էլ ըտրհենց տըղերա միշտ անպակաս ա ինում: Քարտուղարը Միշին անա հըրցընում ա.

-Միշա, ծեր շենումը քանի՝ մարթ ա ապրում:

-Տասը մարթ:

-Ա տնաշին, էս զեռ շենումը հունցա՞ տասը մարթ ապրում:

Ըստեղ Միշան տեղն ա քըցում, շինացուց տեղը բողոքում:

-Հա, ընկեր քարտուղար, մեր շենումը լիա մի տասը մարթ ա, վար կարողանում ըն մըրթըվարի ապրեն, մնացածը՝ չարքաշ, տուժված, ամեն հինչան դժգոհ մարթիկ ըն:

ՓԱՓԱԽԸ

Մին փափախ ծախող տեսնում ա Միշա դայուն, ծեն տամ.

-Միշա, եք փափախ ինք կալ:

Միշան փափախ ծխողեն ասում ա.

-Տու տարտակ կլոխ ճարե, փափախդ ծախե, իմ կլոխը լիգը կլոխ ա, փափախ պետք չի:

ՎԵՐՑԱՆԸ, ԹԱ՞ ՀԱՎԸ

Սիլվա Կապուտիկյանը առաջին անգամ Արցախ ա եկալ 1956 թ. ԼՂԻՄ գրողների միության քարտուղար Բագրատ Ուլուբաբյանի նախաձեռնությամբ, Լեռնային Ղարաբաղի մարզկոմի քարտուղար Սարգիս Աբրահամյանի հատուկ հրավերով:

Ստեփանակերտ, մեր շատ սիրելի գրողին ընթունալ ըն, մին լավ միջոցառում կազմակերպալ, պատիվ տվալ, հետո ճանապարալ Վանքա շենը՝ Գանձասարը տըսնալու: Սիլվա Կապուտիկյանը հիյացալ ա Գանձասարա վանքավը: Դե վերչումը, հունցը վար Արցախում ընթունված ա՝ սիրելի հյուրի պադվին հատուկ ճաշկերույթ ըն կազմակերպում: Տրա մասնագետն էլ էտ ծյորակումը ղլեչի Միշանա ա իլալ: Էս մեր Միշան մին հանց սեղան ա պադրաստում, վար Ստեփանակերտա եկած հյուրերը օզում չըն թա սեղանին տիրած պենեռին նի կյան՝ սեղանին գեղեցկութունը փըչըցնին: Բայց դե սեղանը քիցում ըն ուտելի հետի:

Սեղանին չորս ունգյունավը լոխ նստոտում ըն, բայց վեշ մինը ռիսկ չի անում թամադոթուն անե՝ «վախում ըն» Սիլվա Կապուտիկյանին սրտավը չինի: Հա, էն էլ ասիմ՝ մինչեւ սեղանին նստելը Սիլվա Կապուտիկյանը հըսցրած ա ինում Միշին նհետ ծանոթանա, մին քանի շուլուղ սկանա:

Վերչը, վար սեղանի նստում ըն, մեր գրողներան մինը ասում ա. «Ցանկանալի ա, վար առաչի խոսկը մեր շատ սիրելի գրողն ասի, համ էլ եթե օզում ա սեղանը ինքը ղեկավարի»: Սիլվա Կապուտիկյանը օզում ա թա խոսի, ղլեչի Միշան ասում ա. «Ա ծեզ մատաղ, խե սեղանին ղրաղին մին տղամարթ չի կա, վար կնեգը թամադոթուն անե»: Սիլվա Կապուտիկյանը ասում ա. «Միշա, խե հի՞նչ ա ինելու, վար կնեգը թամադոթուն անե»: Միշան ասում ա. «Սիլվա, տու լավ գրող ըս, քեզ շատ ըմ հարգում, բայց գյուդում չում ծեզ մոտ հունց ա, մեր կոխկին, վար հավը օզում ա վերցակի նման սաս անէ, դաստի կլոխը պուք ըն տամ: Հավը պիդի կըրչկըրչա, ծու ածե, վերցակն ել՝ կանչի»:

Էտ վար Սիլվա Կապուտիկյանը սկանում ա, քահ-քահ ծիծաղում ա, ասում. «Հատե տրա հետի յըմ ծեզ՝ Արցախցիներիտ հարգում, սիրում: Վար տի ավանդապահ ըք, համ էլ կոխկը հաստ, հա'յ իլալ ըք, միշտ էլ հա'յ ըք մնալու և ապրելու ըք էս հողումը, հինչքան էլ ամեն ջուռա թշնամի օզէ վուչ»:

2.ՎԱՃԱԿԱՆ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆ

Կարելի էր ասել բանաստեղծ էր, իր բանաստեղծություններով նա քննադատում էր Ադրբեջանին, բայց ափսոս նա չտեսավ Արցախ աշխարհի հաղթանակը:

Ո՞ւմ է պետք այսպիսի աշխարհ,
Կործանվում է, ազնիվ և արդար,
Գայլերի ոհմակ, ընկած սար ու ձոր,
Կողոպտում սպանում են մեզ ամեն օր:

Ու՞ր եք հասել, հայ առյուծներ,
Ժամն է եկել մեր հատուցման,
Եկեք ջարդենք, ծանր լուծեր,
Այս շներին գայլանման:

Շատ ենք տուժվել հալածանքից,
Քշում են մեզ, մեր մայր հողից,
Արդեն դանակը, հասել է ոսկրին,
Պետք է դաս տանք գայլ շներին:

Քսվեք մեր տնից, ջրից ու հողից,
Դեռ ոտքի ձայնից, սատկում եք դողից,
Երկերեսանի կեղծավորներ,
Ջերմոցային ազերի մողեսներ:

Հրաժեշտ եմ տալիս իմ երկիր չքնաղ,
Իմ օթևան, իմ մայր Արցախ,
Ես չեմ տեսնի, քեզ ազատ անկախ,
Իմ երազանք, արյունոտ Արցախ:

Երանի մի օր, ես հետ գայի,
Ճանաչված պետություն Արցախս տեսնեի,
Միացյալ ազգերը անկախ ճանաչեին,
Հայ Արցախին պետություն անվանեին:

ՀՈՒՄՈՐ

1.Հենընք թուռնեն կողկեն նստոտած
Օտումնք պանիրավ թաժա հաց,
Տահտուլի Երվանդը տոնա կյամ լակած,
Էշնել էնա տռանը կապած,
Լենա, Լենա էն էշը փլանե,
Կլիենտը եկալա, ղզննեն տանե,
Լենան մեզ տեսնումա, սկսում հռհռալ,
Իսկ էշը էտ մոմենտին սկսումա զռզռալ:
2.Տիկին Նինա
Ցերեկը՝
Վաճականեն ձինա,
Գիշերը՝
Վաճականեն տիրուհինա:
Տու ինձ ասե Վաճական,
Թագավորն էս մեր տան,
Կամ էլ Ընձանա հողի խան,
Եթե Վաճականը խանա,
Խե կերածը պզկաթանա....
3.Վաճականը հանդիպեց գյուղի թուրք բժշկին,
Ասաց, բժիշկ, կարող եմ հումորով մին հարց տամ,
Ասաց՝ ասա, Վաչիկ, էժա՞ն կպրծնեմ, ասացի,
Ասաց՝ բժիշկ դու մարդ է՞ս, թե ադրբեջանցի....
Մինչև մահ նա չստացավ պատասխան:
4.Վաճականը ասալա՝ Նինա,
Ես հունց մարդ ում,
Նինան ասալա փնթե,
Դե վար տհենցա,
Ցակատը երկալ էն ծառերը քնթե:
5.Վաճական, կովերը վրդե՞ղըս տանում,
Նինա, կովերը տանում ում արոտ,
Մնամ քեզ կարոտ:
6.Վաճական դային ստոլբան կտրելիս
Մի խոխա հրցնումա.
-Վաճական դայի հինչ պանիյս,-
Էէ՜է, բալաս, ես փթանք, ստոլբան փթանք,
Գուդումչում թա ուրուր հունց քթանք:

ՀԻՄՆԱՐԿ -ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գլուխ III

Գյուղը շատ վաղ ժամանակներից ուներ տեղարդ-կոմբինատ, հիվանդանոց, դեղատուն, քարահանք, մանկապարտեզ, դպրոց, համայնք:

Քարհանք, որտեղ մեր հսկա այրերը պատրաստում էին ջրաղացքարեր ու տարբեր վայրերից գալիս էին տանելու: Քարհանքում աշխատում էին լայնաթիկունք, ուժեղ տղամարդիկ, նրանք էին՝ Գրիշա Բաղրամյանը, Զիլֆի Բաղրամյանը, Գուրգեն Հարությունյանը, Գրիշա Ջալալյանը, Ապրես ու Ալավերդի Մեժլումյանները և ուրիշներ:

Գյուղում զարգացած էր 60-ական թվականներից ծխախոտագործությունը, որտեղ աշխատում էին գյուղի աշխատասեր կանայք, կազմելով խումբ, այն ժամանակ՝ բրիգադա, բրիգադիր՝ Վազգեն Ահարոնյան, օղակավար՝ Փիրուզա Պողոսյան: Նրանք էին՝ Սոնյա Գրիգորյան, Լենա Բաղրամյան, Մարալ Մեժլումյան, Գենա Բաղրամյան, Ասյա Ջալալյան, Մելա Օհանյան, Լիդա Սարգսյան, Մարո Բաղրամյան, Փառանձեմ Գրիգորյան:

Գյուղն ուներ փոստ, որի տնօրեններն էին երկար տարիներ աշխատել՝ Նախշուն Սահակյանը, Յուրա Հայրապետյանը, ուներ խնայդրամարկղ, որի պետն էր Արամ Պողոսյանը, իսկ այժմ գյուղում գոյություն ունի Յունիբանկ մասնաճյուղ, որտեղ այժմ տնօրեն է աշխատում բարձրագույն կրթությամբ՝ Նաիրուհի Լազարյանը:

Գյուղը խորհրդային ժամանակահատվածում դեռևս ուներ դեղատուն, որտեղ երկար տարիներ աշխատել է շատ սիրված ու հարգված Լուսյա տոտան՝ Ստեփանակերտից (այսպես էինք անվանում նրան): Հետո աշխատել է Ստելլա Հայրապետյանը՝ Վանքից: Դեղատունը փակվեց պատերազմի ժամանակ, պատերազմից հետո կառուցվեց նոր դեղատուն, որտեղ մինչ այսօր աշխատում է համագյուղացի Արմիդա Բաղդասարյանը:

Գյուղում կային պետական խանութներ, վարիչներ էին աշխատում Ժասմեն Թևոսյանը, Վալյա Բաղդասարյանը, Արուսյակ Աբրահամյան, Անուշկա Բաղդասարյանը, Ռոզա Մարտիրոսյանը, Գյոզալ Գրիգորյանը, Զոյա Առաքելյանը և Էլմիրա Սահակյանը: Արցախյան պատերազմից հետո գյուղում նորից խանութներ բացվեցին, բայց արդեն

սեփական՝ Գելի խանութ, Յուրայի խանութ, Ռոզայի խանութ, Մարինայի խանութ, Լյուդայի խանութ, Սողոմոնյան Ռոզայի խանութ, Համեստի խանութ, Էլմիրայի խանութ, Արևի խանութ, Վալյայի խանութ, Զարվարդի և Մելայի խանութ:

Մինչև 2011թ. գյուղի համայնքի ղեկավարն էր՝ Ֆեդյա Օհանյանը, ով իր պաշտոնում աշխատել է 16 տարի: Միշտ հոգ է տարել գյուղի բարգավաճման համար: Գյուղի համայնքը. 2011թվականի սեպտեմբերից աշխատում են գյուղապետ՝ Անդրեյ Սարգսյանը, տեղակալ՝ Սերժիկ Բաղրամյանը՝ արցախյան պատերազմի վետերան, քարտուղարուհի՝ Սվետա Հարությունյան, պատասխանատու աշխատողներ՝ Նունե Չիլինգարյանը, Սիրանուշ Բաղրամյանը, Նոնա Մկրտչյանը:

Գյուղում կա մշակույթի տուն, որը շատ ակտիվ գործունեություն է ծավալել հատկապես հայրենական պատերազմից հետո, որպես տնօրեններ են աշխատել Շահեն Գրիգորյանը, Գրիշա Հարությունյանը, Լյուցետա Մկրտչյանը, Նորա Բաղրամյանը, Նունե Գրիգորյանը և Կարինե Գալստյանը, ով մինչ այժմ աշխատում է որպես ակումբի վարիչ եւ արժանացել է մի շարք պատվոգրերի:

Գյուղական գրադարան՝ աշխատել է տնօրեն՝ Մարո Աբրահամյանը:

Գյուղի բնակչության թիվը 70-ական թվականներին անցնում էր 1700 մարդուց:

2015թ. գյուղի բնակչության թիվը կազմել է 1546, 2016թ.՝ 1507, 2017թ.՝ 1509 և 2018 թ.՝ 1519 մարդ:

Վանքի տարածքում էր տեղադրված արտադրական կոմբինատը, այդ ձեռնարկությունը հիմնադրվել է 1929 թվականին: 70-ական թվականներին այդ կոմբինատը ղեկավարում էր հմուտ և փորձառու Արմեն Զաքարյանը, Ալյոշա Ահարոնյանը, Շուրա Չլինգարյանը, Ալբերտ Սարգսյանը և Աստվածատուր Բաբայանը: Լևոն Հայրապետյանի հովանավորությամբ կառուցվեց նոր փայտամշակման կոմբինատ, որ անվանակոչվեց՝ «ԱՏԱ ՎԱՆՔ ԼԵՍ», որտեղ սկսեցին աշխատել 200-ից ավելի բանվորներ: Տնօրեններ աշխատեցին հենց այդ ժամանակահատվածից՝ Անդրեյ Աբրահամյանը, Սերգեյ Դարբինյանը, Գրիշա Լազարյանը, Արտավազդ Սարգսյանը, Սերգեյ Սարուխանյանը, Մաքսիմ Հովհաննիսյանը, Կարեն Պողոսյանը, Վլադիմիր Հայրապետյանը, որը փոխանցեց իր որդուն՝ Գուրգեն Հայրապետյանին, 2016 թ-ից նորից տնօրեն նշանակվեց Սերգեյ Դարբինյանը, իսկ փոխտնօրեն՝ Նորայր Ավանեսյանը:

Վանքը միշտ եղել է վարպետների գյուղ: Խոսրով Ավանեսյանի, Համբարձի Մեժունցի, Մարդի Բաղդասարյանի, Արսեն Պողոսյանի, Պողոս Լազարյանի, Բախշի Հայրապետյանի, Միշա Ասրյանի անունները քաջ հայտնի են եղել պատվիրատուներին: Հայրենիքի ու պետության հանդեպ աչքի ընկած ծառայությունների համար շքանշաններով ու մեդալներով պարգևատրվել են Համբարձում Սահակյանը՝ «Կարմիր աստղ», Փառքի III աստիճանի շքանշաններ, Ղուկաս Աբրահամյանը՝ «Կարմիր աստղ» շքանշան, Խաչի Ավետիսյանը՝ «Կարմիր աստղ», Իշխան Սահակյանը՝ Փառքի II և III աստիճանի շքանշաններ, Կարո Ղուլյանը՝ «Կարմիր աստղ» շքանշան, Սերգեյ Առաքելյանը՝ «Աշխատանքային կարմիր դրոշ» շքանշան և ուրիշներ:

Վանքից երեք հոգի հերոսուհի մայրեր էին, նրանք են՝ Քնարիկ Ասրյանը, որը ուներ 12 երեխա, Լուսիկ Ասրյանը՝ 10 երեխա, Մանուշակ Կաֆյանը՝ 9 երեխա:

Գյուղի հիվանդանոցում բժիշկներ են աշխատել տարբեր ժամանակահատվածում՝ Ռուդիկ Գյուրջինյանը, Էմմա Սոսովնան, Խաչատուր Մելիքյանը, Հովիկ Սարգսյանը, Մելանյա Սահակյանը (ամուսիներ՝ Չափարից), Ռաֆիկ Պողոսյանը (Վանքից), Իվան Հարությունյանը (Վանքից), Նինա Խալփաչյանը, դժբախտաբար նաև մինչև արցախյան շարժումը բժիշկ է աշխատել ադրբեջանցի Թալուփ Կարաևը՝ 40 տարի: Նա երիտասարդների մոտ զարգացրել է խրոնիկ հիվանդությունները, իսկական թուրքամետ քաղաքականություն է տարել, քանի-քանի համագյուղացիների կյանք է խլել դիտավորյալ վերջապես 1988թվականին վռնդվեց գյուղից:

2014 թվականից Վանքի հիվանդանոցում աշխատում էր սիրիահայ բժիշկ Գառնիկ Ջուզիկյանը: Իսկ ներկա դրությամբ՝ աշխատում են բուժքույրեր Սուսաննա Առաքելյանը, Նարինե Սարգսյանը, Վալյա Քարդումյանը, Գայանե Արտեմյանը, Զինա Ահարոնյանը, Անուշ Պողոսյանը, Զարինե Ասրյանը, Ինգա Ղալայանը, Սիլվա Բալայանը և տնտեսվար՝ Արսեն Սարգսյանը:

Գյուղի հին մանկապարտեզը 1968 թվականին ղեկավարել է վաստակաշատ մանկավարժ Լուսիկ Մարտիրոսյանը: Թոշակի անցնելուց հետո մանկապարտեզի վարիչ է նշանակվում Մարիամ Ստեփանյանը: Արցախյան շարժման ժամանակ ռմբակոծվում է շենքը և դադարում է գործել մանկապարտեզը: Պատերազմից հետո 2002թ.

Մարտակերտի կրթության բաժնի վարիչ՝ Յուրա Ենդիգարյանի խնդրանքով կազմակերպում և բացում եմ մանկապարտեզը դպրոցի հին շենքում, բայց վարիչի հաստիք չկար, այդ աշխատանքը հասարակական հիմունքներով ես պետք է կատարեի: Տրվեց մեկ հաստիք դաստիարակ և 0,5 հաստիք խոհարար: 2002թվականից մանկապարտեզում դասիարակչուհի նշանակեցի Ծովինար Լազարյանին, իսկ խոհարարուհի նշանակեցի 0,5 հաստիքով՝ Ժուլետա Բաղրամյանին: Մանկապարտեզը միայն գործում էր ծնողական հասույթի հաշվին, երեք տարի այդպես պահելուց հետո մեր համագյուղացի Գարիկ Պողոսյանը, ով ապրում էր Մոսկվայում խոստացավ հովանավորել մանկապարտեզը գումարով, և հովանավորեց հինգ տարի: Երբ պատրաստ էր նոր մանկապարտեզի շենքը, 2010 թվականի նոյեմբերի 1-ից՝ տնօրեն նշանակվեց Մարիամ Ստեփանյանը: 2011թվականին իր դիմումի համաձայն նա ազատվեց տնօրենի պարտականություններից, դպրոցում աշխատանքի անցնելու կապակցությամբ: 2011թվականի հուլիսի 6-ից մանկապարտեզի նոր տնօրեն նշանակեցի բարձրագույն կրթությամբ 9-տարվա մանկավարժական ստաժով դպրոցի կազմակերպիչ, հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Լուսինե Բաղրամյանին, ով հոյակապ ղեկավար է, պատասխանատու, կարգապահ ու խստապահանջ: Մանկապարտեզում դաստիարակներ են աշխատում Ծովինար Լազարյանը, Նանարա Մկրտչյանը, Վարդուհի Կաֆյանը, Խանում Ղալայանը, Սյուզաննա Հովսեփյանը, Էդիտա Բաղդասարյանը, Լիլիա Բաբայանը, Թամարա Թևոսյանը, Ազնիվե Գրիգորյանը և ուրիշներ:

Վանք գյուղի տնտեսությունը՝ այսօր.

Հիմնականում զբաղվում են անասնապահությամբ և հողագործությամբ: Գյուղի անասնապահության սեփականատերերն են՝ Համլետ Սարգսյանը, Գենադի Թևոսյանը, Ֆեդյա Օհանյանը, Լեոնարդ Գրիգորյանը, Տիգրան Թևոսյանը, Բորիկ Հակոբյանը, Ցաշա Հակոբյանը, Արթուր Բաղդասարյանը, Ալվարդ Բաղրամյանը, Նարեկ Հակոբյանը, Արամ Կաֆյանը, Յուրա Ավանեսյանը, Լենսեր Սևյանը, Ալիկ Կաֆյանը:

Գյուղը՝ գյուղի տարածքում չունի գարնանացանի, աշնանացանի համար տարածքներ: Գյուղը ունի 2-րդ տարածք՝ գյուղից 25 կմ հե-

ռավորության վրա: 2018թ-ին ցանել են 250 հա աշնանացան՝ ցորեն, 50 հա գարնանացան՝ գարի, արևածաղիկ:

Գյուղում մեղվաբուծությամբ զբաղվում են Սամվել Աբրահամյանը, Յաշա Հակոբյանը, Համլետ Սարգսյանը, Հայկ Սահակյանը և ուրիշներ:

Գյուղում կան հանգստյան գոտիներ Նորայր Ավանեսյանի, Սամվել Աբրահամյանի, Ֆեդյա Օհանյանի, Սասուն Աբրահամյանի, Գարիկ Պողոսյանի, Նիկոլայ Հայրապետյանի և Գրիշա Լազարյանի:

Գյուղում կա նաև բենզալցակայան, որի սեփականատերն է Նվեր Ասրյանը:

Արցախյան պատերազմից հետո գյուղում բացվեց ոստիկանատուն և արվեստի դպրոց:

Ոստիկանության բաժանմունքի տնօրեն նշանակվեց Արտեկ Մաղաքելյանը: Թոշակի անցնելուց հետո բաժանմունքի պետ նշանակվեց Արամ Թևոսյանը: Անվտանգության տեսուչ՝ Լյոնիկ Առուստամյանը, օպեր-լիազոր՝ Մխիթար Մովսիսյան, հերթապահ տեսուչներ՝

1. Սևակ Գրիգորյան, օպեր-լիազոր,
2. Օքսեն Հակոբյան,
3. Ժորիկ Աղասյան,
4. Նանե Գաբրիելյան, մանկական տեսուչ:

Արվեստի դպրոցում տնօրեն նշանակվեց Էլմիրա Կարապետյանը, ուսուցիչներ՝ դհոլի՝ Սամվել Բաբայան, պարի՝ Անահիդա Ահարոնյան, քանոնի՝ Նելլի Պողոսյան, ակորդեոնի՝ Կարեն Ռոբերտովիչ և այլն:

ԱՎԱՆԴԱԿԱՆՆ ՈՒ ՆՈՐԸ

Վանք գյուղի ժողովուրդը շատ հյուրասեր են, սիրում են, ինչպես ասում են՝ ուտել, խմել, այսինքն՝ ուտող-խմող ժողովուրդ են, մի քիչ էլ մեծ-մեծ խոսող: Եթե հյուր է գալիս՝ շատ սիրով են ընդունում, թեկուզ ոչ մի հնարավորություն էլ չլինի, հյուրասիրությունը կատարվում է պատշաճ ձևով, խանութի պարտքերի հաշվին, միայն թե հյուրերը գոհ լինեն: Գյուղում շախով-շուխով են կազմակերպում հարսանիքները, նշանդրեքները, ծննդյան տոները, բարգահները, բանակ ճանապարհելու խնջույքները, որը վերջերս ավելի է շատացել, քան մնացած տոները, որովհետև որդի, թոռ կամ ծոռ ենք ուղարկում արցախյան բանակ....

Բայց ահա ես դեմ եմ այն ծիսային արարողության ձևերին, որը կատարվում է մեր գյուղում, մարդուն ուղեկցող հավերժական երևույթին՝ մահվանը: Միանգամից հնարավոր չէ ընդունել հարազատի կորուստը: Ըստ մեր ժողովուրդի՝ հոգին մարմնի մեջ մնում է մեկ օր և հաջորդ օրը դուրս է գալիս, դրա համար ստեղծեցին ինքնահող արարողություն: Յոթ և քառասուն թվերը ժողովրդի համար սիրված կախարդական թվեր են: Յոթը մխիթարելու առիթ է, իսկ քառասունքը սգահան անելու: Քառասունքից հետո թրաշվում են, ընդունված է քիչ լաց լինել, նայել կյանքին: Ցիկլը փակվում է տարով և քար գցելով:

Ծիսակատարությունների այս շարքը, ոչ վաղ շրջանում կատարվում է ոչ այսօրվա նման: Նշվում է համեստ, չափավոր և հիմնական նպատակը տուժած ընտանիքներին օգնել ու եթե կարիք կա՝ տեր կանգնելն էր: Տարին նշվում էր քիչ մարդկանցով, գցում էին սովորական տապանաքար՝ հայկական զարդանախշերով: Միայն ժողովրդի համար կարևոր և արժեքավոր գործ կատարած մարդկանց համար էին հուշարձան-կոթող կանգնեցնում: Ինչ է տեղի ունենում մեր օրերում. կյանքի բարելավումը, գյուղ-քաղաք և այլ վայրերի հետ բազմաթիվ բարեկամական կապերը իրենց հետ բերեցին նաև բացասական երևույթներ: Սգո սեղաններն ու հուղարկավորությունները, քար գցելու արարողությունները, ցուցամոլության, քաղքենիության, մրցասպարեզներ են դարձել ոմանց համար: Իմ նպատակը ոչ թե որևէ մեկին օրինակ բերելն ու քննադատելն է, այլ ճիշտ կենցաղի կազմակերպումը: Գյուղական ղեկավարներն ու ինտիլիգենցիան պարզապես պարտավոր են հետևել հասարակական բնույթի հավաքույթ-ավանդույթներին, թույլ չտալ ավելորդ մրցությունների և ծախսերի: Հարսանիքների թիվը կարծես թե կրճատվել է՝ ելնելով տնտեսական պայմաններից: Առաջներում գյուղում կնունքներ չէին լինում, իսկ ներկա պահին կարծես թե պարտավորություն է կնունքը: Այսինքն՝ մարդիկ մոտեցել են Աստծուն և եկեղեցուն: Մեզ մոտ ավանդույթ է դարձել պարտադիր պապիկ-տատիկների անուններով կոչել թոռներին ու ծոռներին: Այսինքն՝ մենք չպետք է մոռանանք անցյալի լավն ու բարին, որպեսզի կառուցենք ապագայի ավելի լավն ու բարին:

Մեր համագյուղացիների ոմանց փուտ անունները հիշելիս կամ կարդալիս միշտ հպարտանում ենք և ուրախանում:

Պոզ Աբուշ, Աղվես Ալո, Ջայլամ Յաշա, Գադիմալնի Լևոն, Տահտուլանց Միշա, Լոբանց Լեոնարդ, Վեց շահի Գուրգեն, Զորի Ալո, Սոյի Ալյո, Բակի Գիրիշ, Վիրի Յուրա, Լոլո Վազգեն, Պետունց Բենիկ, Օգլի Աշոտ,Պածիբաբո Արտուր, Բուսունց Ռաշիդ, Քյոսա Ծուրա, Քածի Գագո, Դեպա Սուրեն, Չեչո Վազգեն, Քոշի Անյա, Կռանանց Սաթիկ, Ջուջունց Յուրա, Հուդուլանց Բորիկ, Տոպրականց Խորեն, Ղարա Ալբերտ, Մուկլուզ Մանիշակ, Թաշկինակ Աբել, Կուռուզ Նորիկ, Եժով Էդիկ, Կռանանց Ռաֆիկ, Սիրականանց Սերժիկ, Ծաքար Աբո, Գել Էդիկ, Կտզ Սամո, Տարզան Սամո, Ագիլանց Ժորա, ՄոՀի Արմեն, Ջագա Վալո, Կուչան Վազգեն, Խախո Մանվել, Լյոխա Ալյոշա, Կռեչան Բորիկ, Ծռողանց Բորիկ, Լարախաղ Յուրա,Գող Դադիկ, Փալանդուզ Կրոմվել, Հիսուն Ալյոշա, Անատոլի Ալիշ, Նարա Ռուբեն, Ալաշ Գիրո, Չինգո Արայիկ, Ջինգիրանց Ծահեն և այլն:

ԴՊՐՈՑԸ. ՏՆՕՐԵՆՆԵՐԸ, ՎԱՍՏԱԿԱԾԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԸ ԵՎ ԱՆՎԱՆԻ ԾՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Պատմական հանգամանքների բերումով 19-րդ դարում սկսվեց լուսավորական շարժում: Նախանցյալ դարի 80-ական թվականներից, Ծուշիի թեմին ևս իրավունք վերապահվեց «Բարեգործական ընկերություն» Ճյուղ արցախական աշխարհում մեկդասյա և երկդասյա դպրոցներ բացելու: 1800 թվականին Արցախի Գանձասար վանքում բացվել է եկեղեցական ծխական դպրոց՝ 30 աշակերտով եւ 1 վարժապետով, այդտեղ դասավանդում էր Հովսեփ Վարդապետ Արցախեցին (Տեր-Ավագյան), որը հմուտ էր աստվածաբանության, տրամաբանության, Ճարտասանության մեջ: 1881-1882 թթ. Վանք գյուղում բացվում է մեկդասյա արական-ծխական դպրոց՝ 25 աշակերտով: Դասավանդում էր շուշեցի Պետրոս անունով ուսուցիչը և վանքեցի Ալեքսանդր Պողոսյանը: 90-ական թվականների կեսերին, երբ դպրոցները փակվել են՝ այստեղ գաղտնի գործել է դպրոցը: 1908-1909 ուս. տարում Վանք գյուղում գործում էր երկդասյա երկսեռ դպրոց, ուներ երկու բաժանմունք, մեկ ուսուցիչ, 45 աշակերտ, որից՝ 10 աղջիկ: Այնուհետև տարբեր ժամանակահատվածներում ուսուցիչներ են աշխատում Վանքի երկդասյան դպրոցում՝

Բախշի Գրիգորյանը, Պետրոս Ռուստամյանը, Բախշի Արտաշյանը, Լևոն Մովսիսյանը, Սահակ Մովսիսյանը, Վանյա, Գեղամ, և Տրոֆիմ Ֆեոդորովիչները: Վանքի երկդասյան դպրոցի նախկին սաները անջնջելի հիշողություններ են թողել իրենց գործիմաց և մարդամոտ ուսուցիչների մասին: Սամսոն Բեդիի Թևոսյանը գրում է. «Լևոն Մովսիսյանը ոտք դնելով դպրոց, ծեծը չքացավ, նա աշակերտների ու գյուղի հասարակության սիրելին է: Նա ոչինչ չէր խնայում իր գիտելիքները սաներին տալու, միևնույն ժամանակ պահանջկոտ էր, իսկ նրա կեցվածքը, խոսքի կուլտուրան օրինակ էր տալիս իր սաներին»: Դպրոցի նախկին սաները միաժամանակ վերհիշում են դպրոցական ռեժիմի դաժանության մասին, առանձնապես կրոնի դասերին: Ծեծը դպրոցում անպակաս էր: Դասին և դասից դուրս օրվա հերթապահը հետևում է, որպեսզի աշակերտները իրար հետ մտքեր փոխանակեին ռուսերեն: Կրոնից և մայրենի լեզվից բացի մյուս բոլոր առարկանները ավանդվում էր ռուսերեն: Հայ դասական երկերն ընթերցելը արգելքի տակ էր: Մեր լեռնաշխարհում սովետական կարգեր հաստատվելուց հետո 1920-21 ուսումնականում Վանքում ևս բացվում է նոր դպրոց, այդ օրերից էլ չնայած հանդիպվող մեծ դժվարություններին՝ դպրոցական պարապմունքները մտան նորմալ հունի մեջ: 1920-28 ուսումնականներում ջանադրաբար են աշխատել ուսուցիչներ Ղևոնդ Հովսեփյանը, Վանյա Քոչարյանը, Անդրեյ Պողոսյանը, Սոնյա Քոչարյանը, Ալբերտ Գասպարյանը, Լևոն Չիլինգարյանը, Աշխեն Քոչարյանը, Գուրգեն Շեկյանը և ուրիշներ: 1930-ական թվականներին, երբ մտցվեց 8 տարեկանից ընդհանուր պարտադիր կրթություն, ուսուցիչները և գյուղի ակտիվները մեծ աշխատանք ծավալեցին այդ ուղղությամբ: Ուսուցիչների աշխատանքը առավել հետաքրքիր և պատվաբեր դարձավ, երբ օրակարգի հարց էր անգրագիտության վերացումը: Ուսուցիչը քուն ու դադար չուներ, նա ցերեկը դպրոցում էր, իսկ երեկոները՝ անգրագիտության վերացման կայանում: Ուսուցիչը կուլտարշավի առաջին բնագծում էր: Ուսուցչի կենսագրությունը միայն իրեն չէր պատկանում, այն հարյուրավոր թելերով կապված էր աշակերտների հետ: Վանքի դպրոցում տարբեր ուսումնականներում աշխատել են հետեյալ ուսուցիչները՝ Կարո Ղուլյանը, Գուրգեն Շեկյանը, Ալբերտ և Վարդ Գասպարյանները, Սերգեյ Հարությունյանը, Երվանդ Իվանյանը, Գրիշա Աբրահամյանը,

Լազր Սարգսյանը, Արևհատ Մկրտչյանը, Զարվարդ Բաղդասարյանը, Շահեն Պողոսյանը, Աբգար Գրիգորյանը, Եղիշե Մելիքյանը և շատ ուրիշներ: Այսօր էլ նրանք հարգանքով են հիշվում հասարակության կողմից: Վանքի առաջին աստիճանի դպրոցի վարիչը Գուրգեն Շեկյանն էր: 1930-31 ուսումնականում Վանքի քառամյա դպրոցի բազայի վրա բացվեց յոթնամյա դասընթացով դպրոց: 1938-39 ուսումնականում Խաչենի հովտում առաջինը վանքեցիներին բախտ վիճակվեց տասնամյա ուսուցմամբ դպրոց ունենալ, այդ տարիներից Վանքի միջն. դպրոցը շրջանի խոշոր դպրոցներից մեկն էր: Հայրենական պատերազմում հերոսի մահով ընկան ուսուցիչներ Ա.Բաղրամյանը, Մ.Գրիգորյանը, Գ.Հայրապետյանը, Ս.Հայրապետյանը, Ա.Չիլինգարյանը, Ա.Մկրտչյանը, Ա.Սիմոնյանը, Ա.Հակոբյանը, Գ.Սարգսյանը և Խ.Առստամյանը: Վանքի վաստակաշատ մանկավարժներից էր Լազր Սարգսյանը:

Վանքի միջնակարգ դպրոցի երախտավորներից էր Լենինի շքանշանակիր, վաստակավոր ուսուցիչ Աբգար Եփրեմի Գրիգորյանը, ով հետմահու արժանացավ 20-րդ դարի լավագույն մանկավարժի կոչման:

Վալենտինա Սարգիսովնան ոտք դրեց Վանքի միջնակարգ դպրոց 1954-55 ուսումնականում, իսկ 1961-ին արժանացավ հանրապետության գերազանցիկ ուսուցչի կոչման: Հետմահու արժանացավ 20-րդ դարի լավագույն մանկավարժի կոչման: Վանքի միջնակագ դպրոցում 1920 թվականից մինչ այսօր տարբեր ժամանակահատվածներում տնօրեններ են աշխատել Ալեքսանդր Պողոսյանը, Իվան Առուստամյանը, Կարո Ղուլյանը, Սերգեյ Հարությունյանը, Եղիշե Մելիքյանը, Եղիշե Ալավերդյանը, Աբգար Գրիգորյանը, Նիկոլայ Մուրադովը, Գուրգեն Հայրապետյանը, Լազր Սարգսյանը (1956-1975թթ.), Սուրեն Միքայելյանը, Արամ Շեկյանը, Սուրեն Հայրապետյանը, Խորեն Բաղրամյանը, Ալբերտ Սարգսյանը, Ֆլորա Բաղրամյանը, Վարյա Ավանեսյանը և Արամայիս Բալայանը:

Իվան Առստամյան՝ տնօրեն է աշխատել 1938-1939թթ.:

Եղիշե Մելիքյան՝ տնօրեն է աշխատել 1939-1940թթ.:

Լազր Սարգսյան՝ տնօրեն է աշխատել 1955-1971թթ., 1966թ. իր խնդրանքով կառուցվել է Վանքի միջնակարգ դպրոցի հին շենքը, ոչ տիպային, բայց հարմարեցված:

Սուրեն Հայրապետյան՝ տնօրեն է աշխատել 1971-1975թթ.:

Խորեն Բաղրամյան՝ տնօրեն է աշխատել 1975-1980թթ.:

Ալբերտ Սարգսյան՝ տնօրեն է աշխաստել 1980-1985թթ.:

Ֆլորա Բաղրամյան՝ տնօրեն է աշխատել 1986-2011թթ. ում խնդրանքով կառուցվեց Վանքի Գուրգեն Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցը:

Վարյա Ավանեսյան՝ տնօրեն է աշխատել 2011-2017թթ.:

Արամայիս Բալայան՝ տնօրեն է աշխատում 2017թ. օգոստոսից:

Վանքի միջնակարգ դպրոցում մեծ փորձի տեր մանկավարժներ էին Ս.Քարդումյանը, Հ.Արտեմյանը, Մ.Հակոբյանը, Ա.Ահարոնյանը, Ա.Սարգսյանը, Յ.Հայրապետյանը, Վ.Բաղմանյանը, Խ.Բաղրամյանը, Ռ.Ահարոնյանը, Ն.Գրիգորյանը, Ռ.Ահարոնյանը, Լ.Բաղրամյանը, Յ.Հարությունյանը, Ռ.Չալյանը, Ռ.Ղուլյանը, Վ.Լազարյանը, Բ.Մկրտչյանը, Օ.Մկրտչյանը, Զ.Սարգսյանը, Հ.Առաքելյանը և ուրիշներ: Վանքի միջնակարգ դպրոցը 40 տարիների ընթացքում թողարկել է 1000-ից ավելի շրջանավարտներ: Վանքի կրթօջախը այդ օրերին հպարտանում է, որ իր սաների մի մասը դարձան նշանավոր *գիտնականներ*՝

Սամսոն Թևոսյան-քիմիական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ռաֆայել Պողոսյան-բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Շահեն Պողոսյան-պատմական գիտությունների թեկնածու

Գուրգեն Առաքելյան-գյուղատնտեսական գիտությունների թեկնածու

Մուշեղ Հայրապետյան-երկրաբանական գիտությունների թեկնածու

Գուրգեն Հայրապետյան-գունավոր մետալուրգիայի գիտությունների թեկնածու

Համլետ Սարգսյան-տեխնիկական գիտությունների դոկտոր

Բենիկ Չիլինգարյան-տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Արզիկ Մխիթարյան-հոգեբան, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր, ակտիվ հասարակական գործիչ, Արցախյան շարժման ակտիվ մասնակից, գիտության վաստակավոր գործիչ, ԱՀ ազգային ժողովի պատգամավոր:

Դպրոցում կար արտադրական բրիգադա, որը ղեկավարում էր աշխարհագրության ուսուցիչ Ռոմա Ջալալի Ահարոնյանը, ով իր խմբով միշտ օգնում էր կոլտնտեսությանը և ակտիվ աշխատանքի

համար նա ստացավ մրցանակ՝ Մոսկվա գնալու համար, գնաց ակտիվ աշակերտների հետ միասին: 1981-82 ուս. տարում լրացավ դպրոցի 100-ամյակը: 1986 թվականի հունվարից դպրոցի տնօրեն նշանակեցին ինձ՝ հեղինակիս: Տնօրեն աշխատեցի 25 երկար ու ձիգ տարիներ: Նվիրված էի հասարակությանը, մատաղ սերնդին և արցախյան շարժմանը: Իմ տնօրինության ժամանակահատվածում դպրոցը մեծ առաջընթաց ապրեց թե՛ ուսումնադաստիարակչական, թե՛ կարգապահության տեսակետից: Դպրոցը համալրվեց երիտասարդ կադրերով: 1988 թվականին սկսվեց արցախյան շարժումը: Դպրոցը մեծ եռանդով և մեծ ոգևորությամբ մասնակցեց շարժմանը, թե՛ լեգալ, թե՛ անլեգալ: Արցախյան շարժմանը իմ ընտանիքը ակտիվ մասնակցություն ունեցավ, որի կենդանի վկան հենց իմ մանկավարժ որդին էր՝ Հրայր Լեոնարդի Գրիգորյանը, որը Աստծո կամոք փրկվելով մահվան ճիրաններից, դարձավ արցախյան պատերազմի II կարգի հաշմանդամ: Վանքի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Գրիշա Ղալայանը բռնադատվեց թուրք բարբարոսների կողմից: Վեցամսյա տանջանքից հետո միջազգային ատյանների միջամտությամբ ազատեցին նրան: Որը պատճառ հանդիսացավ, որ 60-ամյակը նոր բոլորած վաստակաշատ մաթեմատիկայի ուսուցիչը հեռանա կյանքից:

Ցաշա Հայրապետյան՝ 1928-1989թթ. թոշակառու մաթեմատիկայի ուսուցիչ: Նա ևս բռնադատվեց թուրք բարբարոսների կողմից անտառում: Հարազատները և գյուղացիները նրա մարմինը գտան հոշոտած, 7 օրից հետո:

Սեյրան Բաղդասարյան՝ քիմիայի ուսուցիչ:

Ռաշիդ Թովմասյան՝ հայոց լեզվի և գրականության ուսուցիչ:

Նրանք նույնպես մասնակցություն են ունեցել Արցախյան շարժմանը:

Պատերազմի տարիներին գնդակոծվում է դպրոցի հին շենքը՝ թշնամու կողմից: 25 տարիների ընթացքում ոչ մի անգամ չի վերանորոգվել դպրոցը, հանկարծ հանձնաժողով եկավ դպրոցը վերանորոգելու պատրվակով: Ես և մանկավարժական կոլեկտիվը չհամաձայնվեցինք, որովհետև եթե վերանորոգեին դպրոցը, այլևս նոր դպրոց չէր կառուցվելու, իսկ իմ նպատակն էր գյուղում ունենալ նոր տիպային դպրոց: Պատերազմից հետո գյուղ եկավ գյուղի հարա-

զատ զավակ, դպրոցի նախկին տնօրեն և գիտնական Գուրգեն Հայրապետյանի որդին՝ Լևոն Հայրապետյանը: Ես խնդրեցի նրան, որ գա հին դպրոց և տեսնի դպրոցի անմխիթար պայմանները:

2005 թվականին նա իմ խնդրանքով եկավ դպրոց, տեսնելով անմխիթար պայմանները խոստացավ, որ նոր տիպային դպրոց կկառուցի:

2006 թվականին նա կառուցեց նոր տիպային դպրոց: 2007թվականի սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ Վանքի Գուրգեն Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի բացման արարողությունը:

Նոր դպրոցում ամեն ինչ սկսվեց նոր ձևերով և նոր մեթոդներով: Դպրոցում բացվեց ճաշարան, որտեղ պետք է սնվեին I-XI դասարանի աշակերտները և դպրոցի բոլոր աշխատողները: Դպրոցում բացվեց 5 երկարօրյա խումբ, որը օգուտ է և՛ դպրոցին, և՛ գյուղին, որովհետև այդտեղ աշխատանքի տեղավորվեցին Վանք գյուղից 7 աշխատանք չունեցող մանկավարժներ:

25-30 տարիների ընթացքում, այսինքն՝ սկսած 80-ական թվականներից, դպրոցը տվել է 700 շրջանավարտ, ովքեր դարձել են բժիշկներ, իրավաբաններ, գիտության թեկնածուներ, գեներալներ, փոխգնդապետներ, իսկ 80 տոկոսը՝ մանկավարժներ:

Վանքի միջնակարգ դպրոցն ավարտել և բժիշկներ են դարձել, քույր և եղբայր՝ Ֆլորա և Կառլեն Ղուլյանները: Ֆլորա Ղուլյանն այսօր էլ աշխատում է Ստեփանակերտ քաղաքում, որպես բժշկուհի:

Ներքոհիշյալ նամակը շարադրեց և ուղարկեց Նիկոլայ Բադասի Հարությունյանը 93 տարեկանում, գրանցումը կատարեց իր աղջիկը՝ բժշկուհի Վալյա Նիկոլայի Հարությունյանը, 23.06.2006 թիվ: Խնդրում եմ տալ Վանքի միջնակարգ դպրոցի տնօրեն Ֆլորա Բաղրամյանին, գյուղ Գետավան:

«Վանք գյուղում աշխատել եմ 1939 թվականի սեպտեմբեր, հոկտեմբեր և նոյեմբեր ամիսներին: Նոյեմբերի վերջին նույն դպրոցի դիրեկտոր Եղիշե Մելիքյանը, Շահեն Պողոսյանը, ես և շատ ուրիշ ուսուցիչներ գնացել ենք բանակ, մեր գնալուց հետո դպրոցում դիրեկտոր է մնացել Իվանյանը, այդ երեք ամսին ապրել եմ Ահարոնյան Ջալալի տանը, կնոջ անունը եղել է Մայկո: Ջալալ քեռին և Մայկո տոտան շատ հարգանքով մարդիկ են եղել, ունեցել են 4 երեխա, 3 տղա և 1 աղջիկ: Այդ ժամանակ Վանքի դպրոցում դասավանդել եմ

մաթեմատիկա, ունեցել եմ երեք 8-րդ և երկու 9-րդ դասարաններ, գյուղը այդ տարին 10-րդ դասարան չի ունեցել: Բանակից վերադառնալուց հետո նորից ինձ նշանակում են Վանքի միջնակարգ դպրոցում ուսուցիչ, այս անգամ ամբողջ դպրոցի ֆիզիկան, մաթեմատիկան և աստղագիտությունը ես եմ դասավանդել: Այդ ժամանակ դպրոցի դիրեկտորը եղել է Հայրապետյան Գուրգենը (ում տղան՝ Հայրապետյան Լևոնը Վանք գյուղի համար շատ մեծ և լավ գործեր է կատարել): Այդ ժամանակ դպրոցի ուսմասվար է եղել Աբրահամյան

Դպրոցի հին շենքի մոտ՝
Լևոն Հայրապետյանի (կենտրոնում) հետ

Սառիկը: Ուսուցիչներից հիշում եմ. 1) Աբրահամյան Արշավիրին, որը եղել է դպրոցի զինղեկը, Արշավիրը եղել է ուսմասվար Սառիկի ամուսինը: 2) Գրիգորյան Աբգարը, եղել է ռուսաց լեզվի ուսուցիչ, որին անվանում էինք Աբգար դյադյա: Ուսումնական տարվա կեսին իր ցանկությամբ Գուրգեն Հայրապետյանը հեռանում է աշխատանքից, դպրոցում նոր դիրեկտոր է նշանակվում Գյուլաթաղի դպրոցի

Դպրոցական նորակառույց շենքի բացման ժամանակ

դիրեկտոր՝ Եղիշե Ալահվերդյանը, վերջինս հայոց լեզվի և գրականության մասնագետ է եղել և միևնույն ժամանակ լավ մարդ էր: Այդ տարում Վանքի դպրոցում աշխատել է ինձ հետ միասին նաև կինը՝ Փառանձեմ Հարությունյանը, 3-4-րդ դասարաններում դասավանդել է թվաբանություն: Հիշում եմ դպրոցի լավ սովորող աշակերտներից՝ Միշա Հովհաննիսյան, Խորեն Բաղրամյան, Ասյա Թովմասյան: Այն ժամանակ գյուղսովետի նախագահը եղել է Չիլինգարյան Ղազարը, իսկ կոլխոզի նախագահը՝ Լազարյան Քաջիկը: Վանք գյուղի ժողովրդից մենք շատ գոհ ենք եղել, նրանք շատ հարգանքով են եղել և հյուրասեր»:

ՄԵՐ ԱՆՎԱՆԻ ԾՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԸ

Գլուխ IV

Խորեն Լազարյան՝ ծնվել է 1921թ. Վանք գյուղում: Վանքի միջնակարգ դպրոցը ավարտելուց հետո 1941 թվականին մեկնում է ռազմաճակատ: Մոսկվայի համար մղվող մարտերում 1941թ. ծանր վիրավորվում է և վերադառնում: 1949 թվականին ավարտում է իրավաբանական համալսարանը: 1963 թվականին Հայաստանի կենտկոմի որոշմամբ նշանակվում է քննչական բաժնի ղեկավար, աշխատում է մինչև թոշակի անցնելը՝ 1977 թիվը:

Ժաամեն Հովհաննեսի Ասրյան՝ 1966 թվականին ավարտելով Վանքի միջնակարգ դպրոցը, ընդունվում է Երևանի գեղարվեստաթատերական ինստիտուտը, ավարտելուց հետո աշխատում է Պարոնյանի անվան թատրոնում: Բազմաթիվ գլխավոր դերեր է կատարում, ինչպես ասում է արվեստագետ Հայկազ Երանոսյանը. նա գեղեցիկ է և՛ էությամբ, և՛ հոգեպես, և՛ արվեստով:

Անժելա Աբգարի Գրիգորյան՝ Նրա փորձն ու հոգատարությունը բուժեց շատ ու շատ զինվորների վերքեր: Ծնվել է 1943 թ., ավարտել է գյուղի միջնակարգ դպրոցը: 1960 թվականին ընդունվել է Ստեփանակերտի բժշկական քոլեջը: Մինչև 1998 թվականը Անժելա Գրիգորյանը աշխատել է Ստեփանակերտի հոսպիտալում, որպես վիրահատարանի քույր: Արցախյան պատերազմի ժամանակ փրկել է հարյուրավոր զինվորների կյանքեր: Գիշեր-ցերեկ աշխատում էր՝ նվիրված արցախյան շարժմանը: Նրա աշխատանքը բարձր է գնահատել Արցախի կառավարությունը: Նա պարգևատրվել է «Հայրենյաց պաշտպան», «Գարեգին Նժդեհ» և «Մայրության» մեդալներով: Այժմ նա թոշակառու է, ինսուլտ խփած, բայց այդ վիճակում ևս նա հիշեց իր գյուղը և փոքրիկ բանաստեղծություն արտասանեց.

«Խաչեն գետի ափին
Մենք բոստան ունենք,
Ամեն անգամ այնտեղ,
Լոբի կցանենք:

Ես մեր թաղամասում
Մի ընկերուհի ունեմ,
Ամեն անգամ կվերցնեմ,
Կգնանք լոբին կջրենք»:

Մելսիկ Արտակի Չիլինգարյան

Մելսիկ Արտակի Չիլինգարյան՝ ծնվել է 1956 թվականի մայիսի 9-ին, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը: 1995 թվականին ավարտել է Երևանի իրավատնտեսգիտական համալսարանի հեռակա բաժինը: 1996-99 թվականներին սովորել և ավարտել է ՌԴ Մարշալ Մալինովսկու անվան զրահատանկային զորքերի ակադեմիան: ՀՀ նախագահի 2006 թվականի հունվարի 27-ի ՆՀ-18-Ա հրամանագրով շնորհվել է գեներալ-մայոր բարձրագույն զինվորական կոչում:

Սասուն Յակովի Հարությունյան՝ ծնվել է 1971 թվականին Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Սովորել և ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը, ավարտել է ԱրՊՀ-ի մաթեմատիկայի ֆակուլտետը: Մասնակցել է արցախյան պատերազմին: Պարգևատրվել է «Արիության համար», «Մարտական ծառայություն», «Մարշալ Բաղրամյան», «Անդրանիկ Օզանյան» մեդալներով և ունի փոխգնդապետի զինվորական կոչում: Այժմ աշխատում է որպես Մարտակերտի շրջվարչակազմի աշխատակազմի ղեկավար:

Սասուն Յակովի Հարությունյան

Արմենուհի Յաշայի Հայրապետյան

Արմենուհի Յաշայի Հայրապետյան՝ ծնվել է 1967 թվականին Վանք գյուղում, ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը: Ավարտել է ԱրՊՀ-ի պատմաբանասիրական ֆակուլտետը: 2002-2005 թվականներին աշխատել է ոստիկանության վարչությունում՝ որպես անչափահասների գծով բաժանմունքի պետ: 2005 թվականից ԼՂՀ ոստիկանության շտաբում՝ որպես պլանավորման և վերլուծության գծով ավագ տեսուչ, ոստիկանության մայոր, ներկա դրությամբ աշխատում է անվտանգության նախարարությունում՝ որպես փոխգնդապետ:

Անուշ Ալեքսեյի Ահարոնյան

Անուշ Ալեքսեյի Ահարոնյան՝ ծնվել է 1967թ. Վանք գյուղում: 1982-83 ուս տարում ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և ավարտել է ԱրՊՀ-ի մանկավարժություն և հոգեբանություն բաժինը: 1993 թվականին Շուշի վարժարանում աշխատել է որպես մանկավարժ-հոգեբան: 1995 թվականին որպես թղթակից աշխատել է ԼՂՀ ՊԲ «Մարտիկ» թերթում: 1996 թվականին ընդունվել է ԵՊՀ-ի իրավաբանական ֆակուլտետը: 1997 թ.-ից աշխատել է ՀՀ ՊԲ ՎՎ.Հ որպես ավագ իրավաբան: 1999թ.-ից աշխատել է Երևանի «Երևան» համալսարանի Ստեփանակերտի մասնաճյուղի տնօրեն: 2002 թ.-ից ԼՂՀ փաստաբանների պալատի միության փաստաբան: 2004թ.-ին ավարտել է Մոսկվայի սլավոնական-գործարարական համալսարանի ասպիրանտուրան ու պաշտպանել թեկնածուական: 2017 թ. հոկտեմբերից աշխատում է Արցախի հանրապետության նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության իրավաբանական բաժնում՝ որպես իրավաբան:

Սասուն Ալեքսեյի Հակոբյան

Սասուն Ալեքսեյի Հակոբյան՝ ծնվել է Վանք գյուղում 1978 թ., սովորել և ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցում: Հետո կատարել է իր պարտականությունը հայրենիքի նկատմամբ, այսինքն՝ ծառայել է Արցախի ՊԲ-ում: Հետո դեպքերի բերումով տեղափոխվել է ՌԴ: Կայանալով ՌԴ-ում նա չի մոռացել իր հարազատ բնօրրանը: Միշտ օգնել է գյուղին, հիմնարկ-ձեռնարկություններին, հատկապես՝ դպրոցին, զոհվածների հուշարձանի վերանորոգմանը, կարիքավոր ընտանիքներին, քառօրյա պատերազմին: Իսկ 2017 թվականին հաշվի առնելով նրա կատարած բարեգործությունները՝ Արցախի նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով: 2018 թվականին նա հովանավորեց Գանձասարի Վանք գյուղի մասին գրված պատմությունը, որպեսզի գիրքը հրատարակվի: Ինչպես Սասուն Հակոբյանն է ասում. «Եթե մարդ անցյալ չունենա, իր անցյալը չիմանա՝ ապագա չի ունենա»:

Վոլոդյա Գուրգենի Սարգսյան

Վոլոդյա Գուրգենի Սարգսյան՝ ծնվել է Վանք գյուղում: Ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը: Խորհրդային տարիներին տեղափոխվել է ՌԴ:

Արցախյան պատերազմից հետո գյուղում փլվել էր Հանդիսությունների շենքը: Լսելով այդ մասին Վոլոդյա Սարգսյանը հովանավորեց և Վանք գյուղում կառուցեց մեծ ու հարմարավետ Հանդիսությունների շենքը:

Գարիկ Մուսայելի Պողոսյան՝ ծնվել է Վանք գյուղում: Ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը, հետո տեղափոխվել է ՌԴ: Միշտ օգնել է արցախյան շարժմանը դեռևս ռուս քաղաքագետ Վոլսկու ժամանակաշրջանից: Սկսած 90-ական թվականներից նա մեծ օգնություն է ցույց տվել Արցախին և հատկապես Վանք գյուղին: Օգնություններ է ուղարկել ապրիլյան քառօրյա պատերազմի հետ կապված մեր սահմանում գտնվող զինվորներին, և հինգ տարի հովանավորել է գումարով Վանքի մանկապարտեզին:

Գարիկ Մուսայելի Պողոսյան

Սերգեյ Արարատի Պողոսյան

Սերգեյ Արարատի Պողոսյան՝ արմատներով վանքեցի, ծնվել է Ստեփանակերտ քաղաքում: Արցախյան շարժման ժամանակ 1992 թ. սովորել և ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցի X դասարանը՝ հարվածային գնահատականներով: Բառիս բուն իմաստով հայրենասեր մարդ է, այժմ՝ բիզնեսմեն: Ապրում է ՌԴ-ում: Նա մեծ օգնություն է ուղարկել քառօրյա պատերազմին սահմանին գտնվող զինվորների համար: Օգնել է Վանքի միջնակարգ դպրոցին, կահավորել են սպորտդահլիճը, ապահովել են ըմբշամարտի և բռնցքամարտի սպորտ գույքով, որպեսզի մեր տղաները, մեր աշակերտները պատրաստ կանգնեն մեր սահմանին և պաշտպանեն մեր հայրենիքը:

Հայկ Վոլոդյայի Բալայան՝ արմատներով Վանք գյուղից, հիմա ապրում է ՌԴ-ում: Օգնություն է բերել Արցախյան բանակին՝ հատկապես քառօրյա պատերազմի ժամանակահատվածում, օգնել է գյուղին և դպրոցին: Բոլոր օգնությունների բեռնափոխադրումները կատարել է անձամբ:

Գարիկ Պողոսյանը, Սասուն Հակոբյանը, Սերգեյ Պողոսյանը և Հայկ Բալայանը, այսօր էլ իրենց ներդրումն են կատարում գյուղի և սահմանի բարեկեցությունը ապահովելու համար:

Հայկ Վոլոդյայի Բալայան

Լուսինե Սերժիկի Բաղրամյան

Լուսինե Սերժիկի Բաղրամյան՝ ծնվել է 1981թ. Վանք գյուղում: Ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը: Ընդունվել և ավարտել է ԱրՊՀ-ի բանասիրական ֆակուլտետը: 2001-2002 ուսումնականից աշխատել է Վանքի միջնակարգ դպրոցում՝ որպես կազմակերպիչ և հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի: 2011 թվականից մինչ այսօր աշխատում է՝ որպես Վանք գյուղի «Թիթեռնիկ» մանկապարտեզի տնօրեն և համատեղությամբ՝ դպրոցում՝ ուսուցչուհի: Իր տնօրինության ժամանակահատվածում մանկապարտեզը ժամանակ առ ժամանակ օգնել է սահմանում գտնվող զինվորին և մանկատան երեխաներին:

Նա հայրենասեր է, պատասխանատու և խստապահանջ:

Տաթևիկ Վահանի Գուրգենյան

Տաթևիկ Վահանի Գուրգենյան՝ (երգչուհի) ծնվել է 1988 թվականի հուլիսի 6-ին ՀՀ Շիրակի մարզի Արթիկ քաղաքում: 2001 թվականից, որպես վերաբնակիչ, ընտանիքով ապրել է Արցախի Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: Ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը, այնուհետև ընդունվել Երևանի Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական երգի բաժինը: Տարբեր միջազգային մրցույթների հաղթող է: Աշխատում է Երևանի «Սայաթ-Նովա» աշուղական երգի պետական համույթում:

Անդրեյ Համլետի Սարգսյան

Անդրեյ Համլետի Սարգսյան՝ ծնվել է Վանք գյուղում: Ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը, Ստեփանակերտի բժշկական ուսումնարանը, հետո աշխատել է Վանքի հիվանդանոցում՝ բուժեղբայր: Դեռևս 17-տարեկանից սկսել է օգնել բանակին, զենք և ուտելիք է տեղափոխել ձիով՝ Հաթերք, Ումութլու և այնտեղից Դաստագիր: 1993 թվականից մինչև 1998 թվականը ծառայել է արցախյան բանակի տարբեր տեղամասերում, հետո, որպես բուժեղբայր, աշխատել է գյուղի հիվանդանոցում: 2011 թվականի սեպտեմբերից նա աշխատում է որպես Վանք գյուղի համայնքի ղեկավար: Նա ջանք ու եռանդ չի խնայում, որպեսզի կատարի իր առջև դրված պարտականությունները:

Արամայիս Շուրայի Բալայան

Արամայիս Շուրայի Բալայան՝ ծնվել է 1965 թվականի փետրվարի 1-ին, Մարտակերտի շրջանի Վանք գյուղում: 1982 թ. ավարտել է Վանքի միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել ՀՀ Խ. Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտը: Խորհրդային բանակում ծառայելուց հետո ավարտում է ինստիտուտը և 1989 թ. գործուղում Վանք գյուղ՝ որպես ֆիզիկայի ուսուցիչ: Ակտիվ մասնակցություն է ունեցել Արցախի ազատագրական պայքարում: 1992թ. մասնակցել է Սրխավենդի ազատագրական պայքարին, վիրավորվել է, ապաքինվելուց հետո նորից պայքարել է Արցախյան բանակում մինչև 2017 թիվը: 25 տարի իր կյանքը տվել է հայրենիքին, որի համար արժանացել է տասնյակ պարգևների: 2017 թ. օգոստոսի 24-ից տնօրեն է նշանակվել Վանքի Գուրգեն Հայրապետյանի անվան դպրոցում: Հայրենասեր է՝ բառից բուն իմաստով:

Վանքի միջնակարգ դպրոցի շրջանավարտներից, որպես բժիշկ է աշխատում՝ Ջալալ Հովհաննեսի Հովհաննիսյանը՝ որպես ատամնաբույժներ՝ Վահրամ Գրիշայի Ղալայանը, Սամվել Գրիշայի Լազարյանը, Սրբուհի Ֆեդյայի Օհանյանը:

Քրիստինե Բաբկենի Բալայան՝ ԱրՊՀ-ի աշխարհագրության դասախոս, Իսկուհի Գավրուշայի Ավանեսյան՝ պատմական գիտությունների թեկնածու, աշխատում է Արցախի ազգային ժողովում:

Վանքի միջնակարգ դպրոցը տվել է նաև 150-ավելի մանկավարժներ՝ տարբեր մասնագիտություններով, ովքեր աշխատում են Արցախի և Հայաստանի տարբեր շրջաններում և քաղաքներում: Վանքի Գ. Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի զոհվածների անկյունը հավերժացրին և ֆինանսական միջոցներով օգնեց այդ ժամանակաշրջանում ծնողկոմիտեի նախագահ Ջալալ Ահարոնյանը, և Լուսինե Բաղրամյանը, Ֆլորա Բաղրամյանի տնօրինության ժամանակ:

ՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ ԱՇԽԱՏԵԼ ԵՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԸ

1986-1994 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Բաղրամյան Ֆլորա-տնօրեն
Հակոբյան Միշա-փոխտնօրեն
Մկրտչյան Բերման
Ահարոնյան Ռաֆիկ
Ահարոնյան Ռոմա
Սարգսյան Ալբերտ
Հարությունյան Յակով
Լազարյան Վոլոդյա
Ահարոնյան Արմեն
Արտեմյան Հենրիկ
Լալայան Մանյա
Լալայան Ռիմա
Մկրտչյան Ալվարդ
Ղուլյան Ռազմելա
Սարգսյան Զոյա
Բաղմանյան Վարդուշ
Ղալայան Գրիշա
Մանգասարյան Ամալյա
Ավետիսյան Զոյա
Ավետիսյան Ֆրիդա
Ավետիսյան Լյուդմիլա
Ստեփանյան Մարիամ
Բաղդասարյան Սեյրան
Թովմասյան Ռաշիդ
Առաքելյան Հրաչյա
Ազատյան Գյուլվարդ
Մկրտչյան Էվելինա

1994 - 2007 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Բաղրամյան Ֆլորա-տնօրեն
Թովմասյան Ռաշիդ-փոխտնօրեն
Մաղաքելյան Լիանա
Գրիգորյան Հրայր
Ստեփանյան Մարիամ
Ղալայան Գրիշա
Բաղդասարյան Սեյրան
Հակոբյան Վահագն
Հակոբյան Լևոն
Ավետիսյան Զոյա
Ավետիսյան Ֆրիդա
Ավետիսյան Լյուդմիլա
Մկրտչյան Ալվարդ
Հակոբյան Սվետլանա
Բաղրամյան Լուսինե
Հայրապետյան Լուսինե
Հայրապետյան Ռուզաննա
Թելյան Անահիտ
Պետրոսյան Նարինե
Գրիգորյան Անուշ
Աբրահամյան Մերի
Հակոբյան Միշա
Զաքարյան Սյուզաննա
Գրիգորյան Ծողիկ
Մկրտչյան Էվելինա
Հակոբյան Գայանե

Աղաբաբյան Լիանա
Գրիգորյան Նաիրուհի
Ազատյան Գյուլվարդ
Ղուլյան Ռազմելա
Սարգսյան Զոյա
Մնացականյան Ազգանուշ
Մկրտչյան Լյուցետա
Մկրտչյան Նանարա
Թևոսյան Սիրուն
Բեջանյան Ալլա
Հարությունյան Սուսաննա
Ահարոնյան Ֆլորա
Ահարոնյան Մարո
Ավանեսյան Մարինե
Մկրտչյան Գոհար

2007 - 2011 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Բաղրամյան Ֆլորա-տնօրեն
Թովմասյան Ռաշիդ-փոխտնօրեն
Բալայան Վարուժան
Գրիգորյան Հրայր
Մաղաքելյան Լիանա
Ստեփանյան Մարիամ
Բաղդասարյան Սեյրան
Ղալայան Գրիշա
Մկրտչյան Ալվարդ
Թելյան Անահիտ
Հայրապետյան Ռուզաննա
Բաղրամյան Լուսինե
Հայրապետյան Լուսինե
Պետրոսյան Նարինե
Աղաբաբյան Լիանա
Հակոբյան Սվետլանա
Հակոբյան Գայանե
Հակոբյան Ռազմիկ
Ավետիսյան Ֆրիդա
Գրիգորյան Շողիկ
Գրիգորյան Անուշ
Աբրահամյան Մերի
Ասրյան Ռուզաննա
Ասրյան Լուսինե
Ավետիսյան Լյուդմիլա
Ավետիսյան Զոյա
Գրիգորյան Նաիրուհի
Մկրտչյան Լյուցետա
Լազարյան Նանար
Լալայան Մանյա
Զախարյան Սյուզաննա
Հակոբյան Լևոն
Մնացականյան Ազգանուշ
Թևոսյան Էլիստա
Մկրտչյան Էվելինա
Բաղրամյան Արմինե
Ազատյան Գուլվարդ
Ղուլյան Ռազմելա
Սարգսյան Զոյա
Բաղրամյան Լիանա-գործավարուհի

2011-2018 ԹՎԱԿԱՆՆԵՐ

Ավանեսյան Վարյա-տնօրեն
Բաղդասարյան Սեյրան-
փոխտնօրեն
Բալայան Վարուժան
Գրիգորյան Հրայր
Մաղաքելյան Լիանա
Բաղրամյան Ֆլորա
Մկրտչյան Ալվարդ
Ստեփանյան Մարիամ
Թովմասյան Ռաշիդ
Թելյան Անահիտ
Հայրապետյան Ռուզաննա
Հայրապետյան Լուսինե
Պետրոսյան Նարինե
Հակոբյան Սվետլանա
Հակոբյան Գայանե
Գրիգորյան Ծողիկ
Աղաբաբյան Լիանա
Գրիգորյան Անուշ

Բալայան Արամայիս-տնօրեն
Բաղդասարյան Սեյրան
փոխտնօրեն
Բալայան Վարուժան
Սահակյան Նվեր
Մաղաքելյան Լիանա
Մկրտչյան Ալվարդ
Թելյան Անահիտ
Հայրապետյան Ռուզաննա
Հայրապետյան Լուսինե

Աբրահամյան Մերի
Հակոբյան Ռազմիկ
Ղալայան Գրիշա
Գրիգորյան Նաիրուհի
Զաքարյան Սյուզաննա
Ասրյան Ռուզաննա
Բաղրամյան Լուսինե
Ասրյան Լուսինե
Կաֆյան Գալյա
Կաֆյան Ռիտա
Բաղդասարյան Հասմիկ
Սահակյան Նվեր
Այդինյան Մանուշակ
Ղազարյան Արտուր
Մնացականյան Ազգանուշ
Բաղրամյան Արմինե
Ազատյան Գյուլվարդ
Պողոսյան Դիանա

Պետրոսյան Նարինե
Հակոբյան Սվետլանա
Հակոբյան Գայանե
Գրիգորյան Ծողիկ
Աղաբաբյան Լիանա
Աբրահամյան Մերի
Հակոբյան Ռազմիկ
Գրիգորյան Նաիրուհի
Զաքարյան Սյուզաննա
Ասրյան Ռուզաննա

Մակարդումյան Դիանա
Բաղրամյան Լուսինե
Ասրյան Լուսինե
Կաֆյան Գալյա
Կաֆյան Ռիտա
Բաղդասարյան Հասմիկ
Այդինյան Մանուշակ
Մնացականյան Ազգանուշ
Բաղրամյան Արմինե
Պողոսյան Դիանա
Ավանեսյան Մարիաննա
Բաղրամյան Լիանա՝
գործավարուհի

ՎԱՆՔԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑՈՒՄ
ՏԱՐԲԵՐ ԺԱՄԱՆԱԿԱՀԱՏՎԱԾՆԵՐՈՒՄ,
ՍԿՍԱԾ 1935Թ.-Ի Յ, ՓՈԽՏՆՕՐԵՆՆԵՐ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ.

Ղուլյան Կարո
Հայրապետյան Գուրգեն
Աբրահամյան Սառիկ
Մկրտչյան Օլյա
Բաղրամյան Խորեն
Հայրապետյան Սուրեն
Ահարոնյան Ռաֆիկ
Հակոբյան Միշա
Բաղդասարյան Սեյրան
Թովմասյան Ռաշիդ
Բաղդասարյան Սեյրան

ՈՐՊԵՍ ԴԱՍՏԻԱՐԱԿՉՈՒՀԻՆԵՐ ԵՆ ԱՇԽԱՏԵԼ
ՀԵՏԵՎՅԱԼ ՈՒՍՈՒՅԻՉՆԵՐԸ.

Մկրտչյան Նանարա
Հակոբյան Նոնա
Բալայան Քրիստինե
Առաքելյան Նարինե

Դպրոցի կոլեկտիվը

Տարբեր ժամանակահատվածներում Վանքի միջնակարգ դպրոցում տնտեսվարներ են աշխատել հետևյալ ուսուցիչները՝ Մռավ Հայրապետյան, Բահաթուր Բաղրամյան, Սերժիկ Գալստյան, Ռաշիդ Թովմասյան, Ցաշա Հակոբյան, Ռայա Գրիգորյան, Հրայր Գրիգորյան:

1940 թ.-ից սկսած՝ տարբեր ժամանակահատվածներում, որպես հավաքարարներ են աշխատել դպրոցում հետևյալ ուսուցիչները.

Ռուզաննա Դանիելյան, Մարգո Սահակյան, Արևհատ Թովմասյան, Գերա Հովսեփյան, Լիդա Բաղրամյան, Զոյա Առաքելյան, Զոյա Կափյան, Զարիկ Ղազարյան, Զարվարթ Թովմասյան, Անժելա Հայրապետյան, Ռուզաննա Ասրյան, Անուշ Հակոբյան, Էլիանորա Առաքելյան, Ստելլա Հովհաննիսյան, Ռոմելա Սահակյան, Սվետալանա Լազարյան, Թամարա Լազարյան, Արմենուհի Հակոբյան և ուրիշներ:

Նկարում՝ գրողներ Վարդան Հակոբյանը (ԱԳՄ նախագահ), Ամալյա Գրիգորյանը, Զարինե Սառաջյանը, Գագիկ Բեգլարյանը, Տաթև Սողոմոնյանը, ԱՀ ժողովրդական դերասան Քաջիկ Հարությունյանը Վանքի Գ.Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի կոլեկտիվի ներկայացուցիչների հետ

ԱՐՑԱԽՅԱՆ ԱԶԱՏԱՄԱՐՏ

Գլուխ V

1980-ական թվականներին ավելի սրվեց իրավիճակը Արցախում: Հեռուստացույցով հայերեն ոչինչ չէինք լսում, դպրոցներում հայոց պատմություն չէինք անցնում, փոխարենը անցնում էինք Ադրբեջանի պատմություն: Ավարտական վկայականները, ատեստատները, անձնագրերը, ծննդյան վկայականները պետք է գրեինք ադրբեջաներեն: Մենք՝ արցախցիներս կարոտ էինք ազատությանն ու անկախությանը, և այդ կարոտը մեզ ստիպեց, որպեսզի սկսենք արցախյան ազատագրական պայքարը: 1988թ. գյուղը մեծ ակտիվությամբ մասնակցեց արցախյան պայքարին: Երիտասարդները, անչափահասները, ծերերը մի մարդու նման պաշտպանեցին մեր հայրենիքը, որովհետև եկել էր լինել-չլինելու ժամանակը, նահանջելու տեղ չկար, պետք է պաշտպանեինք մեր ինքնասիրությունը, մեր հողը, մեր հայրենին, մեր գիրն ու գրականությունը, մեր հուշարձանները: Նրանք ցանկացան մեզ սրատել, մեզ թրատել, մեր աչքերը կապել, որ մեր հզոր Գանձասարը, իբր ալբանական է, անտեսելով մեր հզոր ու հպարտ կանգնած հայկական եկեղեցին, որի պատերից ճչում էին հպարտ մեր հին հայկական տառերը: Մենք հաղթեցինք արյան գնով, մեր հարազատների արյան գնով, բայց հաղթեցինք: Սումգայիթում հրոսակները հոշոտեցին մեր զավակներին, այդ զոհերից մեկը՝ Ռաֆիկ Համբարձումի Թովմասյանը, սերված ու դաստիարակված էր Վանք գյուղում, ով մինչև վերջին շունչը պաշտպանեց իր ընտանիքը թուրք բարբարոսներից, վերջում հետևից գաղտնի կացնով մորթեցին նրան, չէ որ նրանց մոտ մարդասպանին հերոսի կոչում էին տալիս, մանավանդ կացնով քնած մարդուն մորթողին, միայն թե մորթվողը հայ լինի, ինչպես՝ Հունգարիայում: Մեր պայքարը արդար էր, որովհետև մենք պաշտպանում էինք մեր հայրենիքը: Ճիշտ է, մեր գյուղը չհասցրին հրոսակները մտնել, բայց գյուղը ամեն օր հրթիռակոծվում և ռմբակոծվում էին թշնամու կողմից: Գյուղը ուներ հատուկ ջոկատ, որի հրամանատարն էր Յուրա Հենրիկի Հակոբյանը: Նա հետմահու պարգևատրվել է «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանով:

Ջոկատը մասնակցում էր Արցախի տարբեր շրջաններում տեղի ունեցող մարտերին: Արցախյան պատերազմի տարիներին գյուղը տվել է 46 զոհ, 48 հաշ-մանդամ: Գյուղը ունի 181 վետերան-ազատամար-տիկներ:

Ջոկատի հրամանատար
Յուրա Հակոբյան

Մեր պայքարն արդար էր, որովհետև մենք պաշ-տպանում էինք մեր հայ-րենիքը: Դաժան պայքա-րից գյուղը հաղթանակով դուրս եկավ, ինչպես ամ-բողջ Արցախ աշխարհը: Մենք հաղթեցինք, որով-հետև միասնական էինք, որովհետև միայն մտածում էինք ապրել ազատ և անկախ, հաղթել թշնամուն՝ թեկուզ կյանքի գնով, հանուն մեր ապագայի: 1994 թվա-կանին նորից ու նորից մենք տոնեցինք մայիսի 9-ը, բայց այս ան-գամ եռատոն:

Ջոկատի տղաները

Զոհված ազատամարտիկների հուշարձանի բացմանը մասնակցեց Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը

Արցախյան պատերազմի ժամանակ իրենց կյանքի գնով պաշտպանել են մեր հայրենիքը.

Նրանք են՝

1. Ավանեսյան Լեմբերտ Սուրենի 1964-1992թթ.
2. Աբրահամյան Սուրեն Նիկոլայի 1965-1992թթ.
3. Մկրտչյան Արտավազդ Բորիկի 1957-1994թթ. (հետմահու՝ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշան)
4. Ղալայան Հայասեր Սուրիկի 1969-1993թթ.
5, Բաբայան Էռնեստ Արարատի 1950-1992թթ.
6. Մկրտչյան Սվետլանա Ալեքսեյի 1965-1993թթ.
7. Ավանեսյան Միեր Յուրայի 1975-1993թթ.
8. Ջալալյան Արթուր Բորիկի 1973-1992թթ.
9. Հարությունյան Արամ Յակովի 1974-1993թթ.
10. Սողոմոնյան Մերուժան Բորիկի 1969-1993թթ
11. Բաղրամյան Մելսիկ Գրիշայի 1958-1993թթ.

12. Ավետիսյան Սերյոժա Սուրենի 1958-1993թթ.
13. Ավանեսյան Բորիկ Երվանդի 1956-1993թթ.
14. Ասրյան Արկադի Աբելի 1974-1994թթ.
15. Հակոբյան Յուրա Հենրիկի 1966-1993թթ. (հետմահու՝ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշան)
16. Ղազարյան Հայկազ Ռուբենի 1962-1994թթ.
17. Ասրյան Բորիկ Գրիշայի 1964-1994թթ.
18. Ասրյան Հայասեր Սարոյի 1964-1994թթ.
19. Թովմասյան Մուրադ Արտուշի 1966-1994թթ.
20. Ջալալյան Ջալալ Գրիշայի 1959-1994թթ.
21. Մակյան Աշոտ Գուրգենի 1973-1994թթ.
22. Հակոբյան Միքայել Բորիկի 1966-1994թթ.
23. Ահարոնյան Դավիթ Ռոբերտի 1971-1994թթ.
24. Բալայան Համլետ Հենրիկի 1970-1994թթ.
25. Գևորգյան Արարատ Անդրանիկի 1954-1994թթ.
26. Հակոբյան Կարեն Շիրինի 1971-1994թթ.
27. Ասրյան Կարեն Արտուշի 1972-1994թթ. (հետմահու՝ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշան)
28. Ասրյան Վոլոդյա Սերյոժայի 1962-1994թթ.
29. Մեժլումյան Հենրիկ Ալավերդիի 1955-1994թթ.
30. Հակոբյան Բորիկ Գուրգենի 1958-1996թթ.
31. Հակոբյան Բորիկ Խաչատուրի1936-1992թթ.
32. Բաբայան Բորիկ Գուրգենի 1954-1993թթ.
33. Բաղրամյան Արայիկ Խորենի1955-1993թթ.
34. Աբրահամյան Վոլոդյա Նիկոլայի 1955-1994թթ.
35. Թովմասյան Ռաֆիկ Համբարձումի 1954-1993թթ.
36. Հակոբյան Աշոտ Ցաշայի 1978-2003թթ.
37. Բաղրամյան Վալերիկ Ռիկոյի 1977-1994թթ. (հետմահու՝ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշան)
38. Բաբայան Արմեն Էռնեստի 1976-2014թթ.
39. Մկրտչյան Գեղամ Ռաշիդի 1986-2016թթ. (ապրիլյան քառօրյա պատերազմ)

40. Մովսեսյան Ռուդիկ Բախշիի 1976-2016թթ.
(ապրիլյան քառօրյա պատերազմ)
41. Բաղդասարյան Շուրա Մուշեղի 1954-1993թթ.
42. Բալայան Լյովա Հենրիկի 1968-2006թթ.
43. Ասրյան Մելսիկ Էդվարդի 1955-1997թթ.
44. Հայրապետյան Գարեգին Նիկոլայի 1963-1994թթ.
45. Հայրապետյան Արկադի Ռուբենի 1953-1993թթ.
46. Գրիգորյան Աշոտ Արշավիրի 1965-1992թթ.

Զոհված ազատամարտիկների հուշարձանը



Արտավազդ Բորիկի Մկրտչյան

Արտավազդ Բորիկի Մկրտչյան

1957-1994թթ.

Հայրենիքի պաշտպանության գործում ցուցաբերել է մեծ հայրենասիրություն: Խիզախության և արիության համար կենդանի ժամանակ պարգևատրվել է «Մայրական երախտագիտություն» մեդալով: Նա վիրավորվել է պատերազմում, բայց չցանկանալով բուժվել, այդ վիճակում նա նորից մտավ մարտադաշտ, որովհետև դա իր որոշումն էր: Նա գնաց նորից մարտադաշտ և զոհվեց 1994 թվականին:

Հետմահու պարգևատրվեց «Մարտական խաչ» II աստիճան շքանշանով:

Կարեն Արտուշի Ասրյան

1972-1994թթ.

Արցախի ինքնապաշտպանության ուժերում կռվել է 1991-1994 թվականներին: Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից էր: 1994թ. ապրիլի 17-ին քաջաբար զոհվել է Հասանղայա գյուղի ազատագրման ժամանակ:

Հետմահու արժանացել է «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանի:

Կարեն Արտուշի Ասրյան

Վանք գյուղը ակտիվորեն մասնակցեց նաև ապրիլյան քառօրյա պատերազմին: Մեր ապագա սերնդին մեկ անգամ ևս հպարտությամբ գոչեցինք՝ մենք վստահում ենք ձեզ, ձեր ցավը տանենք:

Ապրիլյան պատերազմում Գեղամ Ռաշիդի Մկրտչյանը ակտիվ մասնակցություն է ունեցել՝ հատուկ նշանակության խմբի առաջին ջոկի հետախույզ-սակրավորի պաշտոնում: 2016թ ապրիլի 3-ին մասնակցել է Թալիշի պաշտպանության համար մղվող մարտերին և արիաբար զոհվել տանկի արկից: Նա ծնվել է Վանք գյուղում, սովորել է Վանքի միջնակարգ դպրցում: Ծառայել է Արցախյան բանակում, զորացրվել է 2006 թ.: Նորից 2013 թ-ին պայմանագրային հիմունքներով ծառայության է անցել ՊԲ N զորամաս՝ որպես հետախույզ-գնդացրորդ: Նա չհասցրեց տեսնել իր մինուճարին:

Գեղամ Ռաշիդի Մկրտչյան

ԱՀ նախագահի կողմից պարգևատրվել է «Մարտական ծառայություն», ՀՀ նախագահի կողմից «Արիության», Արցախի ազատամարտիկների միության կողմից՝ «Հայրենիքի պաշտպան» մեդալներով:

Նա սիրում էր զինվորական գործը: Դրա համար նա իր ապրած 29 տարիներից 5-ը նվիրեց Արցախի պաշտպանությանը, որովհետև նա հայրենասեր էր:

Վանք գյուղից արցախյան պատերազմի հաշմանդամներն են՝

1. Հովիկ Շիրինի Ղալայան՝ «Մարտական ծառայություն» մեդալ
2. Հրայր Լեոնարդի Գրիգորյան՝ «Մարտական ծառայություն», «Արիության համար» մեդալներ
3. Նանսեն Շուրայի Սահակյան
4. Սասուն Մուրադի Առաքելյան
5. Յուրա Ալբերտի Սահակյան
6. Մխիթար Մուրադի Հարությունյան՝ «Մարտական ծառայություն»
7. Ռաֆիկ Գուրգենի Մակյան
8. Մանվել Արմենի Ավանեսյան՝ «Մարտական ծառայություն» մեդալ
9. Զավեն Յուրայի Աբրահամյան
10. Արամայիս Մեսրոպի Պողոսյան՝ «Արիության համար», «Մայրական երախտագիտություն» մեդալներ
11. Գարեգին Կոլյայի Պողոսյան
12. Մուրադ Բախշիի Հակոբյան
13. Հրանտ Սերյոժայի Ասրյան՝ «Մարտական ծառայություն» մեդալ
14. Արամիկ Աբելի Ասրյան
15. Ալյոշա Հակոբի Հակոբյան
16. Աբել Մռավի Հայրապետյան՝ «Մարտական խաչ» II աստիճանի շքանշան
17. Էդիկ Նուրիի Հայրապետյան՝ «Արիության համար» մեդալ
18. Վասիլի Խաչիի Ղալայան՝ «Արիության համար» մեդալ
19. Տիգրան Սարոյի Թևոսյան
20. Արկադյա Իսայի Օհանյան
21. Համո Ռուբենի Կաֆյան
22. Դանիել Գուրգենի Դանիելյան՝ «Մարտական ծառայություն» մեդալ

23. Արթուր Խորենի Բաղրամյան՝
«Մարտական ծառայություն» մեդալ
24. Վազգեն Սամսոնի Սարգսյան՝
«Մարտական ծառայություն»մեդալ
25. Ժորա Սերյոժայի Ավագյան
26. Դադիկ Երվանդի Ավանեսյան
27. Արարատ Զավենի Աբրահամյան
28. Մասիս Զավենի Աբրահամյան
29. Արկադի Արմենի Ավանեսյան
30. Խաչատուր Գրիշայի Կաֆյան
31. Սերգեյ Էդիկի Օհանյան
32. Լևոն Էդիկի Օհանյան
33. Դադիկ Երվանդի Ասրյան
34. Մանվել Արմենի Ահարոնյան
35. Լյովա Արտեմի Գրիգորյան
36. Ֆեդյա Իսայի Օհանյան
37. Արսեն Համլետի Սարգսյան
38. Դադիկ Սեդրակի Քարդումյան
39. Գեղամ Բերմանի Մկրտչյան
40. Արթուր Ալյոշայի Ավանեսյան
41. Հրաչիկ Ծուրայի Բաղդասարյան
42. Գենադիկ Միշայի Հակոբյան
43. Ռասիմ Լազարյան
44. Ռաֆիկ Եղիշի Լազարյան
45. Արսեն Բահաթուրի Բաղրամյան
46. Վալերիկ Ավանեսյան
47. Ռաֆիկ Աշոտի Լազարյան
48. Աշոտ Ալեքսեյի Ահարոնյան

Վանք գյուղում՝ ըստ Վանք համայնքի և վետերանների միության նախագահ Ն.Ասրյանի ցուցակի, պատերազմի տարիներին ռմբակոծության ժամանակ զոհվածները.

1. Վիլեն Բաղրամյան
2. Ասյա Ջալալյան
3. Բորիկ Հակոբյան
4. Բորիկ Բաբայան
5. Արտուր Բեգլարյան
6. Սվետլանա Մկրտչյան

Հովիկ Շիրինի Ղալայան: Ծնվել է 1970 թվականին Վանք գյուղում: Դպրոցն ավարտելուց հետո սկսվեց արցախյան շարժումը: 1990թ. կազմակերպել է պարտիզանական ջոկատ, որը գործել է մինչև 1992 թ. սեպտեմբերի 2-ը: Վիրավորվել է Վաղուհասի պաշտպանության ժամանակ: 2011թ-ից մինչև 2015թ. Վանք գյուղի վետերանների միության նախագահն էր: Մահացել է 2015թ-ին:

Նվեր Ալբերտի Ասրյան: Ծնվել է 1972թ. Վանք գյուղում: Վանքի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո 1990թ. անդամագրվել է Վանքի ինքնապաշտպանական ջոկատում: Մասնակցել է Արցախյան ազատամարտի բոլոր մարտերին: 2015թ.-ին ընտրվեց վետերանների միության նախագահ:

Հրայր Լեոնարդի Գրիգորյան: Արցախյան պատերազմի վետերան, 2-րդ կարգի հաշմանդամ, մանկավարժ: Ծնվել է 1974թ-ին Վանք գյուղում: Դեռ դպրոցը չավարտած 14 տարեկանից նա մասնակցում էր արցախյան շարժման ընդահատակում, դպրոցն ավարտելուց հետո 1991 թ. նա ուսանող էր Երևանում, բայց թողնում է իր ուսանողական կյանքը և գաղտնի մտնում պատերազմի մեջ: Երբ լրանում է 18 տարին նա ծառայում էր Ստեփանակերտի փրկարարների ջոկատում՝ Ասլան Գրիգորյանի հրամանատարությամբ: Հրայր Գրիգորյանը շատ հայրենասեր է ու համարձակ: 1994 թվականի հունվա-

րի 12-ին Մարտակերտի շրջանի Հակոբ Կամարի (Լյուլասազ, այժմ Վարընկաթաղ) գյուղի պաշտպանության ժամանակ ծանր վիրավորվում է ձեռքից և ոտքից, Աստծո կամոք փրկվում է մահից: Հետո նա իր հայրենասիրությունը շարունակում է դպրոցում, փոխանցում է մատաղ սերնդին՝ կրթությամբ ու դաստիարակությամբ: Ընդհուպ մինչև՝ ՀՀ ազգային ժողովի գավաթը հասցրել է Վանքի Գ. Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցը: Պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Արիության համար» մեդալներով:

Աբել Մռավի Հայրապետյան

Աբել Մռավի Հայրապետյան: Ծնվել է 1953 թ. Վանք գյուղում: Արցախյան պատերազմի մեծ նվիրյալներից է: Մինչև պատերազմը սկսելը մեծ աշխատանք է կատարել ընդհատակում:

Պատերազմի ժամանակ եղել է տանկային շարասյան հրամանատարը, նա եղել է նաև հասարակական և քաղաքական գործիչ:

Վիրավորվել է 1994 թ-ին և արժանացել «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանի:

Էդվարդ Ապրեսի Մեժլումյան

Էդվարդ Ապրեսի Մեժլումյան: Արցախյան պատերազմի վետերան: Արցախյան պատերազմում մեծ ավանդ է թողել, իր վրիժառու տանկով ահ ու սարսափ էր մտցնում ադրբեջանական ոսոխների մեջ: Իր համարձակությամբ թշնամու դեմ պայքարի ժամանակ

1994 թ. վիրավորվել է, արժանանացել է «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանի:

Սերժիկ Վրեժի Աբրահամյան: Արցախյան պատերազմի վետերան, բազմաթիվ սխրագործությունների ասպետ, հայրենասեր:

Նա կառավարության կողմից արժանացել է «Մարտական խաչ» II աստիճանի շքանշանի:

ԲԱՐԵՐԱՐ
ԼԵՎՈՆ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Գլուխ VI

Արցախյան պատերազմից՝ 1994թ., հետո Վանք գյուղը հուսահատված էր, աղքատ, արյան հետքերը դեռ չէին լվացվել, հուսահատ հայաքցներ էին ամենուրեք, տնտեսական ծանր վիճակ էր, անցումային շրջան:

Այդ ծանր ժամանակահատվածում, ինչպես պայծառ արև՝ ամպրոպից հետո, երկնքում փայլեց մեր հույսն ու հավատը, մեր Լևոն Հայրապետյանը և ջերմացրեց մեզ: Հայոց հարուստ բառապաշարը չի հերիքում, որ ես բնութագրեմ այն ամենը, ինչ արել է նա: Վանք գյուղին պետք էր աշխատատեղ, որպեսզի երիտասարդները չգնային ռուսաստաններ: Նա ստեղծեց այդ ամենը, նա արեց ոչ միայն Վանք գյուղի համար, այլև ամբողջ Արցախի, իսկ մի՞թե դա չէր Արցախ աշխարհի քաղաքական նպատակը, այսինքն, որ հայը մնա իր հողում, իր սարերին ու ձորերին, անտառներին ու դաշտերին, հուշարձաններին ու պապական գերեզմաններին, իր հող ու ջրին տիրություն անի: Ղարաբաղցի հոր և նախիջևանցի մոր զավակ՝ ծնված

1949 թ., Վանք գյուղում: Հոր կողմից իշխանական՝ Հասան-Ջալալյանների տոհմից էր, մոր կողմից՝ մեծ հայրենասեր Նժդեհի: Տատը Նժդեհի մեծ քույրն էր: Այդ մասին Լևոնն իմացել էր տարիներ հետո, քանզի խորհրդային ժամանակներում արգելված էր Նժդեհի անունը տալ, և Լևոնից թաքցրել էին դա: Պատմում է, որ այդ մասին իմացել է, երբ պիտի Չեխոսլովակիա մեկներ: Իրեն չթողեցին պատճառաբանելով ազգակցական կապը Նժդեհի հետ: «Ես այդ մասին չգիտեի, հետո սկսեցի ուսումնասիրել ու իմացա, որ նա մեծ հայասեր, բայց Սովետական միությունում ֆաշիստ և նացիոնալիստ համարվող Նժդեհն էր»,- պատմում է Լևոն Հայրապետյանը: Անշուշտ, արմատը պարտադրում էր: Ամերիկայում, Ֆրանսիայում, Ռուսաստանում ապրող Լևոն Հայրապետյանը իրեն համարում էր ղարաբաղցի, քանզի արմատը Վանք գյուղում է: Երբ երկու ամսական էր՝ ընտանիքը դուրս եկավ գյուղից: Պատճառը հոր՝ Գուրգեն Հայրապետյանի անկուսակցական լինելն էր: Հայրը չհամաձայնվեց մտնել կոմունիստական կուսակցության շարքերը, ինչի համար նրան ազատեցին դպրոցի տնօրենի պաշտոնից: 1957 թ-ին ընտանիքը տեղափոխվեց Երևան: Միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո Լևոն Հայրապետյանը մեկնեց Մոսկվա և ընդունվեց ՄՊՀ փիլիսոփայության ֆակուլտետը: Ավարտելուց հետո ընդունվեց ասպերանտուրա, պաշտպանեց գիտական թեզ, աշխատանքի անցավ «Օգոնյոկ» հանդեսում, այնուհետև՝ «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթում: Տարբեր քաղաքական պատճառներից ելնելով՝ Լևոն Հայրապետյանը հեռացավ թերթի խմբագրությունից, և աշխատանքի ընդունվեց «Սոբեսեդնիկում»: Հետագայում այդ թերթը դարձավ իր սեփականությունը: Ամեն ինչ ստեղծել էր Մոսկվայում, ուներ լավ ընտանիք, ապահով կյանք, աշխատանք, բայց հենց այդ ժամանակ հայրենի Արցախում սկսվել էր պայքար՝ հանուն պատմական արդարության վերականգնման: Լևոնը զգում էր, որ մեծ պատերազմ կլինի, իսկ մենք զենք չունեինք, հետևաբար նա մտավ էներգետիկայի՝ նավթի ու գազի բնագավառ, որ կարողանա օգնել մարտնչող Արցախին: 1992 թվականին ընտանիքի ապահովության համար ուղարկեց Ամերիկա, իսկ ինքը եկավ Արցախ: «Գնում գալիս էի: Ինձ չէին թողնում կռվեմ: Ասում էին՝ կռիվ անող շատ ունենք, փամփուշտ չունենք, դու ավելի լավ է զբաղվես այդ գործով»,- «Շանթ» հեռուստատեսության

«Աշխարհի հայեր» հաղորդաշարին տված հարցազրույցում պատմել է Լևոն Հայրապետյանը: Եվ նա նվիրվեց Արցախի ազատագրման և շենացման սուրբ գործին: Հայրենի Վանք գյուղում հիմնել է հյուրանոցային համալիրներ, բանկեր, հանդիսությունների սրահ, կառուցեց դպրոց, մանկապարտեզ, համայնքի շենք, արվեստի դպրոց, ոստիկանատուն, վերանորոգեց հիվանդանոցը, կառուցեց շուկա, դեղատուն, ասֆալտապատեց Վանք գյուղի և Գանձասար տանող ճանապարհները: Գործարարի միջոցներով 2000-2002 թթ. վերակառուցվել է Գանձասարի վանական համալիրը: 2008 թ. հոկտեմբերի 16-ին Արցախի Հանրապետության մայրաքաղաք՝ Ստեփանակերտում, հինավուրց Շուշիում և պատմական Գանձասարում բարերարը կազմակերպեց նորապսակների համատեղ պսակադրություն: Այդ արարողությունը, 700 զույգերի մասնակցությամբ, իր տեսակով առաջինն էր, ոչ միայն Արցախում, այլև՝ Հայաստանում: Մեծ հարսանիքի օրը 200 զույգ պսակադրվեց Գանձասարի վանքում: Մի քանի ժամ անց ևս 500 զույգ պսակադրվեց Շուշիի Ղազանչեցոց եկեղեցում:





Արցախյան մեծ հարսանիք

Լևոն Հայրապետյանը կառուցեց փայտամշակման գործարան, գազանանոց, միշտ օգնում էր զոհվածների ընտանիքներին՝ գումարով, օգնում էր դպրոցի մանկավարժական կոլեկտիվին՝ գումարով շնորհավորեց 2005թ. ծնված Վանք գյուղի բոլոր նորածիններին՝ յուրաքանչյուրին 500-ական ԱՄՆ դոլարով: Նա ամեն անգամ Վանք գյուղ գալուց կազմակերպում էր էշերի մրցույթ, նպատակն էր ուրախացնել ժողովրդին, և գումարով օգնել երեխաներին: Վարձատրում էր 1-ին, 2-րդ, 3-րդ տեղեր գրված և մնացած բոլոր երեխաներին:

Բարերարի առաջնային ծրագրերից էր համարում Արցախում ռազմական ակադեմիայի հիմնումը, որի նպատակն էր Արցախի և Հայաստանի Հանրապետության համար բարձրաստիճան սպայակազմի պատրաստումը: Հայրապետյանն ասում էր, որ ցանկացած երկրում, այդ թվում՝ Արցախում, մարդիկ զարգացման զգալի արդյունք ցուցաբերելու համար պետք է պայքարեն կաշառակերության և անհարկի շքեղության դեմ: Լևոն Հայրապետյանն իր ամբողջ կյանքում պայքարեց հայ ժողովրդի ցեղասպանության ճանաչման համար, և Արցախի անկախության համար: Նա պայքարեց ազատության համար, բայց 2014թ. հուլիսի 15-ին Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում վայրէջք կատարելուց հետո նրան ձերբակալեցին: Մինչև մահը նա մնաց ՌԴ-ում ազատազրկված՝ ճաղերի հետևում: Նա կյանքից հեռացավ 2017թ. հոկտեմբերի 18-ին: Մեծ բարերար Լևոն Հայրապետյանի մահը ցնցեց բոլորիս: Սպասում էինք նրան՝ պիտի գար և ստեղծեր իր հրաշքն Արցախում: Սակայն չեկավ, մնաց հոր և մոր շիրիմների մոտ՝ ընդմիշտ իր սիրտն ու հոգին թողնելով Արցախում: Յուրաքանչյուրս ապրում էր հարազատին կորցրածի անասելի վիշտը՝ ափսոսանքի, խղճի, տանջանքի զգացողությամբ: Ցավոք, ծառի մեծությունը կտրելուց հետո է երևում:

Վանք գյուղում ավանդույթ դարձած էշերի մրցույթում

Լևոն Հայրապետյանը հիրավի ազգային մեծ արժեք էր և նրա մահը մեծ կորուստ է մեզ, հատկապես՝ արցախցիներիս համար: Սգալն այլևս անիմաստ է. մեծ անհատները ազգին ծառայում են ոչ միայն կենդանության օրոք: Լևոն Հայրապետյանը՝ զտարյուն մանկավարժի որդին, երբեք իրեն մանկավարժ չի համարել, բայց նրա ապրած կյանքը մի ամբողջ դասագիրք է երեկվա, այսօրվա և վաղվա համար:

«ՄԵՐ ԳՅՈՒՂՆ ԷՆ Է, ՈՐ...»

Նվիրում եմ հայրենի Վանք գյուղին

Մեր գյուղն էն է, որ դարեր է ապրել
Եվ մինչ օրս էլ՝ կանգուն մնացել,
Շատերն են այստեղ եկել, գնացել՝
Մեկը մեկից շատ սիրել, հիացել,
Բայց չտեսավ ոչ մեկ, և ոչ-ոք չզգաց
Այն, ինչ որ ես ու սիրտս ենք զգում:
Շատերն են տեսել մեր Գանձասարը
Եվ ոմանց համար այն լոկ մի վանք էր,
Բայց ես ապրում եմ նրա օրհնությամբ՝
Այն սրբություն է մորս պես շատ թանկ:
Դարերի խորքից արձագանքում են
Մեր Գանձասարի զիլ ղողանջները,
Որ ներկաներին միշտ վկայում են՝
Հայի արմատը դարերի խորքում
Շատ խորն է եղել, հատելն է դժվար.
Նրանք ոսոխին ահազանգում են՝
Չփորձեն հանկարծ առաջ գալ մի քայլ:
Շատերն են նստել Խաչենի ափին,
Մի-մի բաժակ էլ զարկել ու խմել,
Բայց ոչ-ոք չտեսավ գետի այն հունը,
Որ միտքը տանում էր դեպի անհունը,
Եվ ոչ մեկ չլսեց գետի այն ձայնը,
Որ աղերսում էր իր մայր Արաքսին՝
Ետ բերել մի ողջ անմեղ ժողովուրդ:
Շա՜տ գեղեցիկ է մեր բնությունը,
Հատկապես բարձրում գտնվող սարերը,
Բայց գեղեցիկը շատ մեղմ է ասված,
Մեր գյուղում բարձր սարերը՝
Չքնաղ են, հիասքանչ և միաժամանակ՝
Հարկ եղած դեպքում բռունցք են դառնում
Եվ վա՜յն է եկել թշնամու գլխին,

Եթե հանկարծ «քնած արցախցին»
Վեր կենա տեղից.
Նա վրիժառուն է, որդին Մասիսի,
Որ միշտ խնդրում է հորը տուն դառնալ,
Որ իր հետ բերի տարածքը հայի:
Շատերը գիտեն մեր բարերարին՝
Նա արժանավոր զավակն էր գյուղի,
Նա հույս էր, լույս էր անդուր խավարում,
Պայծառ արևն էր՝ մռայլ երկնքում.
Ցավոք՝ շուտ մարեց լույսը մեր գյուղի,
Հավետ կհիշենք մեր բարերարին:
Ամեն քայլափոխ նրան է հիշեցնում,
Նրա վեհ գործերն են միշտ աչքի զառնվում:
Սիրելի ճամփորդ, քայլերդ ուղղիր
Դեպի մեր Վանք գյուղ,
Վստահեցնում եմ, մեր գյուղը մի պահ
Հեքիաթ կթվա, բայց և խնդրում եմ՝
Միայն աչքերով չնայես գյուղիս,
Ամենին նայիր մի քիչ պարզ հոգով
Ու կզգաս քեզ ինչպես հեքիաթի հերոս:
Տե՛ս, սա մեր գյուղ տանող ճամփան է,
Պարզ հոգով մտիր և մաքուր խղճով՝
Երկու առյուծներ մուտքի մոտ կանգնած
Մեզ են պաշտպանում,
Չար հոգով մարդկանց մենք չենք ընդունում,
Մենք առյուծասիրտ, խիզախ մարդիկ ենք,
Բայց հյուրին պատվել ու հարգել գիտենք:
Ես մի քանի քայլ՝ և մի քիչ զգույշ.
Գլուխ խոնարհիր, սիրելի ճամփորդ
Այստեղ գրված են մեր զոհվածների
Սուրբ անունները՝ արյունով կնքված,
Սա հուշարձանն է մեր անմահների,
Որ անմահացան մեր կյանքի համար,
Նրանց շնորհիվ այսօր ապրում ենք
Եվ արարում ենք ազատ Արցախում:

Երկու քայլ ևս՝ մի քիչ զուսպ եղիր.
Մեզ ողջունում է, ոստիկանատունը,
Որ միշտ հսկում է գյուղի անդորրը:
Վերջապես հասանք մենք գյուղի կենտրոն.
Ծարա՞վ ես զգում դու գիտելիքի՝
Այն կհագեցնես հենց մեր դպրոցում,
Արվե՞ստ ես սիրում, նաև մշակու՞յթ՝
Քայլերդ ուղղիր արվեստի դպրոց:
Շատ հարցե՞ր ունես, չունե՞ս պատասխան՝
Գնա դու ուղիղ համայնքապետարան:
Եվ Աստված չանի, հանկարծ վատ զգաս՝
Իսկույն կտանենք մեր հիվանդանոց:
Ճամփո՛րդ, արի քեզ նաև մի քիչ զարմացնեմ,
Թե հայրենիքի գովքին ես կարոտ,
Ուզում ես իմանալ հայրենիքն ի՞նչ է
Թիթեռնիկները մեր մանկապարտեզի
Դրանք սերտում են մանուկ հասակից
Եվ խրոխտ ձայնով բացականչում են.
«Ապագա զինվորն եմ՝ հայոց բանակի»
Իմ լավ բարեկամ, տեսած կա՞ս կյանքում
Դու «Տիտանիկը».
Դե՛, առաջ անցիր՝ ահա մեր գյուղի
Մեծ հրաշալիքը:
Արի քեզ տանեմ մեր «Ծովին քարը»,
Որտեղ հանգրվանում է ամբողջ աշխարհը:
Ինչու՞ զարմացար, սիրելի ճամփորդ,
Քեզ մեր առյուծի խուլ մռնչյունը
Փոքր-ինչ վախեցրեց.
Ժպիտով անցիր հրաշք, ժայռակերտ
Առյուծի կողքով, այդ մռնչյունը
Ընկալիր որպես մի բարի ողջույն:
Իմ լավ բարեկամ, տու՛ր ինձ պատասխան,
Այն ինչ որ տեսար նաև զգացի՞ր,
Ինչ էլ որ ասես, կամ էլ մտածես՝
Մեկ է ինձ համար՝ իմ գյուղն ուրիշ է:

Մեր գյուղն ուրիշ է, մեր գյուղն իմ տունն է,
Մեր տան երդիկից ելնող այն ծուխն է,
Որ վկայում է գյուղացու շունչը,
Ամեն մի տան ծուխ՝ մի հայ օջախ է:
Մեր գյուղն իմ բակն ու առատ բոստանն է,
Մեր տան առջևի թթենու ծառն է,
Մեր հարևանի ջերմառատ բարևը,
Կապույտ երկնքում՝ ժպտացող արևը:
Տատիկիս թխած թոնրի տաք հացն է,
Տատիկիս կերտած այբուբեն ծառն է,
Պապիկիս տնկած՝ խնձորի ծառը:
Հորս սուրբ արյամբ կերտված բուռ հողն է,
Մորս սուրբ ձեռքով տրված կում ջուրն է,
Զինվոր եղբորս՝ պահած սահմանը:
Մեր գյուղը ես եմ՝ նրա մասնիկը,
Որ պարտավոր եմ արժանի լինել
Գյուղիս անցյալին և ապագայում՝
Միշտ բարձր պահել անցյալի փառքը,
Որ մեր Վանք գյուղն է՝
Միշտ պատվով տարել:
Մեր գյուղն էն է, որ դարեր է ապրել
Եվ կապրի հավերժ՝
Աստվածն է վկան:

Ազնիվե Հրայրի ԳՐԻԳՈՐՅԱՆ
Վանք գյուղի բնակչուհի, Արցախի Գրիգոր Նարեկացի համալսարանի բանասիրական ֆակուլտետի IV կուրսի ուսանողուհի

ՈՐՊԵՍ ՎԵՐՋԱԲԱՆ

Արիություն՝ սա պիտի լինի քո սերնդի կրոնը, հայ երիտասարդ: Արի և արիադավան,- այդպիսին պիտի լինի հայությունը, եթե ուզում է որպես ազգ ապրել և վաղը: Հայ երիտասարդություն, պիտի կարողանաս արտաքին վտանգի ժամանակ ձեռքդ խղճիդ գոչել. -Ես քո կենդանի սուրն եմ, հայրենիք, որ քեզ հաղթություն պիտի բերի: Պիտի չկարողանաս՝ իզուր ես ապրում: Պիտի չարիանաս՝ վայ քո ժողովրդին...

Գարեգին Նժդեհ

Մենք տոնեցինք մեր շարժման 30 տարին, շնորհավորեցինք մեր զոհվածների հարազատներին, մեր հաշմանդամներին, մեր վետերաններին, ովքեր կերտել են այս հաղթանակը: Այս հաղթանակը իմ ապագա սերունդ, փոխանցում եմ ձեզ, որպեսզի սրբությամբ պահեք և շարունակեք պահել ձեր պապերի, ձեր հայրերի, ձեր եղբայրների արյամբ, ձեռք բերված 30 տարին, այն շատ թանկ պետք է լինի ձեզ համար:

Իմ ապագա սերունդ, դուք պետք է հզոր և հայրենասեր լինեք, պետք է ինտելեկտ ունենաք, որովհետև մենք քիչ ենք, բայց պետք է շատ խելացի լինենք, որպեսզի տարբերենք գլխավորը՝ երկրորդականից: Մեր հարևանը մեր թշնամին է, միշտ պետք է պատրաստ լինենք: Մեր հույսն ու հավատը մեր կայացած և կայացող բանակն է, մեր հույսն ու հավատը մեր զինվորն է, մեր հրամանատարն է: Ինչպես մեծն զորավար Գարեգին Նժդեհն է ասել. «Սիրելի բանակի հրամանատարներ, զինվորի կողքին ձեզ պահեք որպես հարազատ հայր, զինվորի կողքին ձեզ պահեք որպես հարազատ եղբայր, զինվորի կողքին ձեզ պահեք որպես անդավաճան ընկեր»:

Քաղաքականությամբ կարող է զբաղվել ցանկացած ինտելեկտուալ մարդ, բայց երբեք քաղաքականությունը չպետք է շփոթել խար-

դախության հետ: Մեր հարևան թշնամիների հիմնաքարը դրվել է խարդախությամբ և գողությամբ, որը հաստատում են հենց իրենք՝ իրենց գործողություններով: Հայե՛ր, իրար մի մոտեցեք խարդախությամբ, և դավաճանությամբ, չէ՞ որ մենք փոքր ազգ ենք և մեր ուժը մեր միասնության մեջ է: Խարդախությունը և դավաճանությունը չի մոռացվում և չի ներվում ազգի և անհատի կողմից: Զգաստացեք, հայեր, եղեք միասնական: Աշխարհում քաղաքացիական պատերազմներ են ընթանում, մենք կրել ենք դրանց դառնությունները, մեր ուժը մեր միասնության և համերաշխության մեջ պետք է լինի:

Այնտեղ, ուր սարեր կան սարերի վրա և ձորեր կան ձորերի մեջ, ուր կուսական անտառն է՝ հավերժության երգը շրթին, և աղբյուրներն են զանգակաձայն երգում, կանգնած է Գանձասարը: Նրա հայացքի տակ, Խաչենագետի հովտում գյուղն է՝ 1000 տարեկան, որն իր դարավոր արմատներն ունի, կանաչ, ժպտացող սաղարթներ, գյուղի անունն է՝ Վանք:

Առյուծաբաշ լեռներում

Վանքի մուտքի մոտ հսկում են առյուծները



Գուրգեն Հայրապետյանի անվան միջնակարգ դպրոցի շենքը

Մեսրոպյան այբուբենը՝ դպրոցական շենքի ճակատին

Մանկապարտեզի շենքը

«Տիտանիկ» նավը գետի ափին...



«Ծովին քար»-ի հյուրանոցային համալիրը

Նավը՝ լեռան վրա

Աոյուծամագիլ լեռներ

Քարերում խոսում է հայոց հանճարը



Լևոն Հայրապետյան: Մեր պայծառ արև՝ հավերժ մեր սրտերում

Համայնապատկեր

Բովանդակություն

Ներածություն....3
Գլուխ I. Գանձասար 5
Խորհրդային տարիներին....11
Առյուծագորգ....15
Շքամուտք արևմտյան....16
1216 թ. Առանշահիկ Հասան Ջալալը հռչակվեց ամբողջական Արցախի թագավոր «Բնակավոր ինքնակալ բարձր և մեծ Արցախական աշխարհի»....16
Կտակ պատարագներ....17
Հավապտոկ....18
Դարպասներ....19
Աշխարհագրական դիրքը, բնական սահմանները....20
Գլուխ II. Հնագույն ժամանակներից մինչև 1920թ. 21
Պատմական հուշարձանները....23
Հողատարածքները....23
Գետերը....23
Վայրի կենդանիները....24
Գետերի ձկնատեսակները....24
Աղբյուրները....24
Գյուղամիջյան աղբյուրներ....24
Անտառների թռչունները....24
Խորհրդային կարգեր....25
Հայրենական Մեծ պատերազմը և վանքեցիները....27
Մեր ավանդապաշտ սրամիտները....32
Գլուխ III. Հիմնարկ-ձեռնարկությունները 39
Ավանդականն ու նորը 43
Դպրոցը. տնօրենները, վաստակաշատ մանկավարժները և անվանի շրջանավարտները....45
Գլուխ IV. Մեր անվանի շրջանավարտները 53
Գլուխ V. Արցախյան ազատամարտ 67
Գլուխ VI. Բարերար Լևոն Հայրապետյանը 79
«Մեր գյուղն էն է, որ...» 83
Որպես վերջաբան....87

Ֆ Լ Ո Ր Ա Բ Ա Ղ Ր Ա Մ Յ Ա Ն

ԳԱՆՁԱՍԱՐԻ ԾՈՒՔԻ ՆԵՐՔՈ

Վ Ա Ն Ք

(Պատմական ուրվագծեր. երեկ և այսօր)

Խմբագիր՝ Վ. ՀԱԿՈԲՅԱՆ
Սրբագրիչ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Էջադրումը՝ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ
Կազմի ձևավորումը՝ Ա. ՀՈՎՍԵՓՅԱՆԻ

Թուղթը՝ օֆսեթ, տպագրությունը՝ օֆսեթ, չափը՝ 60x84 1/16:
Ծավալը՝ 6 տպ. մամուլ: Տպաքանակը՝ 100:

Տպագրվել է «Դիզակ պլյուս» հրատարակչության տպարանում
ԼՂՀ, Ստեփանակերտ, Հ. Հակոբյան, 25